Azg Ազգ

2 ՄԱՐՏ 2011 ՇՈՐԵՔՇԱԲԹԻ 36 (4655)

ISSN: 1829-1651

Տեր-Պետրոսյանն իշխանություններին տվեց 2 շաբաթ՝ 14 կետից բաղկացած պահանջները կատարելու համար

Երեկ լրացավ մարտի 1-ի ողբերգական իրադարձությունների 3-րդ տարին: Մարտի 1-ի զոհերի հիշատակը հարգելու համար Մատենադարանի մոտ տեղի ունեցավ ՀԱԿ հանրահավաքը, որն, ըստ Լևոն Զուրաբյանի, հանգրվանային էր: Թեպետ ոստիկանության տրամադրած տվյալներով հանրահավաքին մասնակցում էր 9-10.000 մարդ, սակայն մեր տպավորությամբ մարդկանց թիվը գերազանցում էր 20.000-ը: Հանրահավաքին ներկա էին նաեւ Հմայակ Հովհաննիսյանը, Ժիրայր Սեֆիլյանն ու նախկին զինվորական դատախազ Գագիկ Ջհանգիրյանը, սակայն նրանք ելույթներով հանդես չեկան:

Անդրադառնալով 2008թ. մարտի 1-ին՝ ՀՀՇ վարչության նախագահ Արամ Մանուկյանն ասաց, որ այդ օրը իշխանությունները 300 հոգու դարձրել են հաշմանդամ, 150 հոգու բանտարկել, 100.000-ավորներ էլ լքել են երկիրը:

«Մարտի 1-ը ամոթի օր է, խարան մեր պետության համար: Սակայն չենք նվնվալու, այլ ըմբոստանալու ենք եւ վերականգնելու այն, ինչ կորցրինք մարտի 1-ին: 10 տղաների արյունը թաց է եւ քանի նրանց սպանողները չեն պատժվել, ժողովուրդը անելիք ունի»:

Տես էջ 2

ՀՀ ԱԳ նախարար. «Որոշ մարդիկ վստահություն չունեն Թուրքիայի նկատմամբ»

«Որոշ մարդիկ, ներառյալ Եվրոպայում, վստահություն չունեն թուրքական կողմի նկատմամբ: Նրանք կարծում են, որ Թուրքիան ասում է մի բան, անում է մեկ այլ բան»: Այդ մասին հայտարարել է Ավստրիայում այցով գտնվող Հայաստանի ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը ավստրիական Der Standard-ին տված հարցազրույցում: «Թուրքական կողմի հետ բանակցային գործընթացը բազում խոչընդոտներով լի երկար եւ բարդ գործընթաց էր: Նախարարական մակարդակով տեղի են ունեցել ավելի քան տասը հանդիպումներ: Օրինակ՝ Դավոսում Թուրքիայի՝ այն ժամանակվա արտաքին գործերի նախարար Ալի Բաբաջանի հետ վարել ենք 35 ժամ տեւողությամբ բանակցություններ: Մենք վերջապես եկանք համաձայնության եւ Ցյուրիխում 2009թ. հոկտեմբերին Շվեյցարիայի, ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Եվրոպական միության եւ Եվրոպայի խորհրդի ներկայացուցիչների ներկայությամբ ստորագրեցինք արձանագրությունները: Ստորագրելուն պես Թուրքիան դրանց վավերացման համար առաջ քաշեց նախապայմաններ», նշել է Նալբանդյանը: Հարցին, թե ի՞նչ կատարվեց թուրքական կողմի հետ, Նալբանդյանը պատասխանել է. «Հավանաբար այդ մասին Դուք պետք է հարցնեք նրանց: Հնարավոր է՝ ոչինչ էլ չի պատահել: Ամեն դեպքում, հնարավոր է՝ նրանք, ովքեր ասում էին, որ դուք չեք կարող վստահել Թուրքիային, լրացուցիչ փաստարկ են ստանում»: Դիտարկմանը, թե արդյո՞ք թուրքական կողմը հետ կանգնեց գործընթացից՝ ընտրությունների հետ կապված նկատառումներից ելնելով, Նալբանդյանը նշել է. «Թուրքերը հակված են մտածելու, որ միայն Թուրքիայում կարող են լինել ընտրություններ, հանրային կարծիք: Մինչդեռ մենք ավելի շատ պատճառներ ունենք նախապայմանների մասին խոսելու համար»:

ՀՀ ԱԳ նախարար. «Որոշ մարդիկ վստահություն չունեն Թուրքիայի նկատմամբ»

«Որոշ մարդիկ, ներառյալ Եվրոպայում, վստահություն չունեն թուրքական կողմի նկատմամբ: Նրանք կարծում են, որ Թուրքիան ասում է մի բան, անում է մեկ այլ բան»: Այդ մասին հայտարարել է Ավստրիայում այցով գտնվող Հայաստանի ԱԳ նախարար **Էդվարդ Նալբանդյանը** ավստրիական Der Standard-ին տված հարցազրույցում: «Թուրքական կողմի հետ բանակցային գործընթացը բազում խոչընդոտներով լի երկար եւ բարդ գործընթաց էր: Նախարարական մակարդակով տեղի են ունեցել ավելի քան տասը հանդիպումներ: Օրինակ՝ Դավոսում Թուրքիայի՝ այն ժամանակվա արտաքին գործերի նախարար Ալի Բաբաջանի հետ վարել ենք 35 ժամ տեւողությամբ բանակցություններ: Մենք վերջապես եկանք համաձայնության եւ Ցյուրիխում 2009թ. հոկտեմբերին Շվեյցարիայի, ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Եվրոպական միության եւ Եվրոպայի խորհրդի ներկայացուցիչների ներկայությամբ ստորագրեցինք արձանագրությունները: Ստորագրելուն պես Թուրքիան դրանց վավերացման համար առաջ քաշեց նախապայմաններ», նշել է Նալբանդյանը: Հարցին, թե ի՞նչ կատարվեց թուրքական կողմի հետ, Նալբանդյանը պատասխանել է. «Հավանաբար այդ մասին Դուք պետք է հարցնեք նրանց: Հնարավոր է՝ ոչինչ էլ չի պատահել: Ամեն դեպքում, հնարավոր է՝ նրանք, ովքեր ասում էին, որ դուք չեք կարող վստահել Թուրքիային, լրացուցիչ փաստարկ են ստանում»: Դիտարկմանը, թե արդյո՞ք թուրքական կողմը հետ կանգնեց գործընթացից՝ ընտրությունների հետ կապված նկատառումներից ելնելով, Նալբանդյանը նշել է. «Թուրքերը հակված են մտածելու, որ միայն Թուրքիայում կարող են լինել ընտրություններ, հանրային կարծիք: Մինչդեռ մենք ավելի շատ պատճառներ ունենք նախապայմանների մասին խոսելու համար»:

«Կարսի հուշարձանը քանդում են Ադրբեջանի նախագահի խնդրանքով»

Հայտարարել է նախկին քաղաքապետ Ալիբեյօղլուն

Հ. ՉԱՔԲՅԱՆ

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի ծավալմանը զուգընթաց սպառվում են թուրքական ժխտողականության դիրքերը: Չնայած դրան, Թուրքիան շարունակում է ուրանալ պատմական փաստը: Քանի որ թուրքական ժողովրդական զանգվածները սիրահոժար մասնակցել են հայերի բնաջնջմանը, կողոպտելով նաեւ իրենց անմիջական զոհերին, ուստի ցեղասպանության ուրացման հարցում ի սկզբանե պաշտպանել են իշխանություններին: Այսպիսով, Թուրքիայում Հայոց ցեղասպանության հարցի շուրջը ձեւավորվել է իշխանություն-հասարակություն համերաշխությունը:

Դրա հիմքում թեեւս հանցագործի հոգեբանությունն է, որն իշխանությունների պարագայում արտահայտվում է Հայաստանի եւ հայերի նկատմամբ որդեգրած թշնամական քաղաքականությամբ, քաղաքական կուսակցությունների պարագայում՝ հայկական դավադրության որոնումներով, որոնց հետեւանքով հայ ազգային փոքրամասնությունը երկրում դիտարկվում է թուրքական պետության ազգային անվտանգության սպառնալիքը, իսկ հասարակությունը, չհաշված մի քանի ազնիվ մտավորականների, ընդհանուր առմամբ ունի անբարյացակամ վերաբերմունք, որը հաճախ ատելության բնույթ է ստանում: Այդ առումով պատահական չէին Հրանտ Դինքի սպանությունից հետո տարբեր մարզադաշտերում հնչած «Բոլորս Օգյուն Սամասթ ենք» բացականչությունները:

Քանի որ այդ բացականչությունները հնչել են տարբեր քաղաքների մարզադաշտերում, ուստի հայերի նկատմամբ ատելությունը ընդհանուր է դառնում ոչ միայն մարզասերների եւ ազգայնամոլների, այլեւ՝ բազմաթիվ քաղաքների համար: Դրանցից ատելության առավել դրսեւորումներով առանձնանում էր Կարսի թուրք եւ ադրբեջանցի բնակչությունը, ի տարբերություն քուրդ բնակչության: Սակայն հայերի եւ թուրքերի հետ գոյակցությունը խորհրդանշող «մարդասիրության» հուշարձանը որոշվեց հենց Կարսում կառուցել:

Տես էջ 5

Դժգոհ ստորագրություններն ու պատերազմի կոչերը

Հանդիպումը Սոչիում դժվար թե պակասեցնի Ալիեւի «կռվատենչությունը»

Ղարաբաղյան հակամարտության բանակցությունները ավելի հաճախ իմիտացիայի տպավորություն են թողնում, քան թե ինչ-որ իրական գործընթացի, որտեղ դերակատարները, ինչ էլ քննարկեն բանակցությունների սեղանի շուրջը, անոթության դրանից տարբեր հայտարարություններ են անում ինչպես մինչեւ հանդիպումները, այնպես էլ դրանցից հետո:

Չնայած միջնորդների ջանքերին՝ Ադրբեջանում առիթ-անառիթ չեն մոռանում հայտարարել, թե հարցը ունի ռազմական լուծում, իսկ երկիրն էլ իբր լիովին պատրաստ է այդ տարբերակով ղարաբաղյան հակամարտությունը լուծելուն: Ուստի այսպիսի տրամադրությունների ու հայտարարությունների համատեքստում քիչ տարօրինակ ու իմիտացիոն են դառնում բանակցությունները, որոնց անցկացմանը նպաստելու հարցում, հատկապես վերջին շրջանում, զգալի ջանքեր է ներդնում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահողներից մեկը՝ Ռուսաստանը:

«**Ազգը**» երեկվա համարում ներկայացրել էր մարտի 5-ին Սոչիում կայանալիք հանդիպման առնչությամբ մտահոգությունները, դիտարկմամբ, որ վերջին մի քանի նախապատրաստությունների արդյունքում հանդիպման չգնացած կամ հանդիպումից փախուստ տված Ադրբեջանի նախագահը կարող է նույն վարքագիծը դրսեւորել նաեւ Սոչիում: Եվ երբ նման կեցվածքը համադրվում է ահռելի ռազմական բյուջեով ու այդ միջոցները գործի դնելու սպառնալիքներով, դժվար է հասկանալ, թե բանակցություններում կոնկրետ քննարկում կարող է լինել, թե՞ ոչ:

Ամեն դեպքում, երեկ ինչպես Երեւանը, այնպես էլ Մոսկվան պաշտոնապես հաստատեցին, որ Սոչիում եռակողմ հանդիպում է սպասվում: Ըստ Կրեմլի հաղորդագրության, Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները Ռուսաստանի նախագահի հրավերով կլինեն Սոչիում, որտեղ եռակողմ հանդիպման ընթացքում նախատեսվում է քննարկել ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցեր»:

Նախագահների մակարդակով նախատեսված հանդիպում ունենալու վերջին հնարավորությունը պետք է լիներ Ասսանայում՝ ԵԱՀԿ նախագահների գագաթաժողովի շրջանակներում, որտեղ, սակայն, ադրբեջանական կողմը բոլոր ուժերով անգամ ընդդիմացավ նաեւ Ադրբեջանի նախագահի կողմից ստորագրված հնգակողմ հայտարարությունը ԵԱՀԿ Ասսանայի հռչակագրում հիշատակելուն:

Այդուհանդերձ, Ադրբեջանը ոչ միայն շարունակում է ռազմական գործողությունների դիմելու մասին հայտարարությունները, այլեւ չեն դադարում շփման գծում տեղի ունեցող միջադեպերը: Իսկ ԵԱՀԿ առաքելության կողմից շփման գծի դիտարկումները շարունակում են խախտումների բացակայությամբ առանձնացող իրավիճակ գրանցել: Ադրբեջանի ռազմական հռետորիկան կարծես որեւէ հակազդեցության չի հանդիպում, ադրբեջանական չինովնիկական տարբեր մակարդակի ներկայացուցիչներ անընդհատ եւ անընդմեջ խոսում ռազմական լուծումից, թեեւ միջազգային փորձագիտական գնահատականները բնավ էլ «ադրբեջանական հաղթանակ» չեն կանխատեսում:

Կարծիքները, թե թեկուզ բանակցությունների իմիտացիան նախընտրելի է դրանց բացակայությունից, կարող էին առավել հիմնավոր դառնալ, եթե նույն իմիտացիան պահպանվեր նաեւ Ադրբեջանի ներքին հասարակական մթնոլորտում: Մինչդեռ ստացվում է, որ, մի կողմից, Ադրբեջանն ակնհայտորեն դժգոհ է բանակցությունների ներկայիս ընթացքից, բայց, այնուամենայնիվ, ինչ-որ փաստաթղթեր է ստորագրում ու մասնակցում է հանդիպումների եւ քննարկումների, մյուս կողմից, իր իսկ հասարակությանը փորձում է համոզել, թե ելքը պատերազմն է, որին Ադրբեջանն իբր լիովին պատրաստ է:

Այսինքն՝ այն ամենը, ինչ բոլոր առիթներով ընդգծում են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները, թե արդեն իսկ ժամանակն է հակամարտության կողմերի հասարակություններին նախապատրաստել փոխզիջումների, թե ժամանակն է փոխվստահության միջոցներ ձեռնարկելու, ոչ ավելի են, քան «ձայն բարբառոյ յանապատի...»:

Ա. ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատաղի բախումներ Տրիպոլիի մատույցներում

ԱՄՆ-ը պատրաստվում է ուժային գործողության

Լիբիայում երեկ գիշերվանից սաստկացել են Մուամմար Քադդաֆիի կողմնակիցների եւ հակառակորդների զինված բախումները: Ապստամբները կատաղի մարտեր են մղում մայրաքաղաք Տրիպոլիի մերձակա էզ Զավիա եւ Միսրատա քաղաքների վերահսկողությունը պահպանելու համար: Էզ Զավիայի բնակիչներից մեկը հեռախոսով Ասոշիեյթեդ Պրես գործակալությանը հայտնել է, որ Քադդաֆիի զորքերը միաժամանակ արեւմուտքից եւ արեւելքից գրոհել են քաղաքը, բայց ապստամբները կարողացել են հետ մղել գրոհները, նռնականետներից գնդակոծելով հակառակորդի տանկերը:

Այդ պարտությունից հետո վարչակարգի ուժերի կորիզը կազմող վարձկանները դիմել են փախուստի, սակայն Քադդաֆին տեղացի ազդեցիկ ցեղապետ Մուհամմեդ ալ Մաֆթուֆի միջոցով ընդդիմադիրներից պահանջել է թողնել քաղաքի կենտրոնական հրապարակը, այլապես կլինեն օդուժի ռմբակոծություններ: Քաղաքում պատրաստվում են մեծ ճակատամարտ:

Հիշյալ գործակալության թղթակիցը էզ Զավիայի արեւմտյան ծայրամասում տեսել է Քադդաֆիին հավատարիմ ուժերի մեծ կուտակում, ինչպես նաեւ զրահատեխնիկա, այդ թվում՝ տանկեր, հակաօդային պաշտպանության միջոցներով զինված ջիպեր: Այդ ստորաբաժանումները մտնում են «Խամիսի բրիգադի» մեջ, որի հրամանատարը Քադդաֆիի որդի Խամիսն է:

Ինչ վերաբերում է ԱՄՆ-ին, նա ուժային գործողություն է նախապատրաստում Լիբիայի վարչակարգի դեմ: Դրա վկայությունն է մասնավորապես ամերիկյան մերձավորարեւելյան ռազմակայանների վերախմբավորումը: Այդ մասին հայտարարել է Պենտագոնի պաշտոնական ներկայացուցիչ, գնդապետ Դեյվիդ Լաքանը:

Ամերիկյան ռազմանավերին հրամայված է «մոտենալ Լիբիայի ափերին՝ ի դեպս անհրաժեշտության»: Ներկայումս ամերիկյան երկու ավիակիր կա Պարսից ծոցի շրջանում, իսկ մի խումբ ռազմանավեր պարեկություն են անում Միջերկրական ծովում:

«Մենք պատրաստում ենք գործողությունների տարբեր ծրագրեր, ուստի տարածաշրջանում վերախմբավորում ենք մեր զորքերը, որպեսզի պատրաստ լինենք գործելու, հենց որ ընդունվեն որոշումներ», պարզաբանել է գնդապետ Լաքանը:

ԱԶԳ

Ընթացիկ

ԳԴՀ նախկին կանցլերը հարաբերականացնում է Հայոց ցեղասպանությունը

Քարոյականության երկակի սանդղարտներ

Գերմանական Հաննովեր քաղաքում մեկնարկել է CeBIT համակարգչային ամենամյա տոնավաճառը: Այս տարի տոնավաճառի գործակից երկիրը Թուրքիան է, հետեւաբար վարչապետ Էրդողանի Դյուսելդորֆ-Հաննովեր այցը տոնավաճառը հանդիսավոր բացելու առիթով էր պայմանավորված: Շաբաթներ առաջ պաշտպանության նախարար Ցու Գութենբերգի հրաժարականի պահանջին, որ երեկ բավարարվեց, գերմանական քաղաքական դաշտը շաբաթասկզբին մեկ ուրիշ՝ հրաբխային ընդերքում եռացող ու միշտ պոռթկումի պատրաստ ճնարկում հավելեց՝ թուրքերի ինտեգրումը: Էրդողանի այցով լավան նորից եռ տվեց ու զայրույթ բորբոքեց:

Սրան դեռ կանդրադառնանք, բայց առավել քան հիասթափեցնող է, երբ պաշտպանության նախարարի դոկտորականը արտագրելու՝ բարոյականության մասին աջուձախ հնչող գերմանացիների քարոզների ֆոնին Հայոց մեծ ողբերգության շահարկումը, այն հարաբերականացնելու փորձը նույն քաղաքական վերնախավի զայրույթ-բողոքը չի հարուցում: Բարոյականության երկակի սանդղարտնե՞ր:

Նախկին կանցլեր Գերհարդ Շրյոդերը փետրվարի 26-ին 60 000 տպաքանակով լույս տեսնող PAZ Peiner Allgemeine Zeitung-ին տված «Գլոբալ դերակատարման համար Եվրոպան Թուրքիայի կարիքն ունի» վերնագրյալ մեծածավալ հարցազրույցում, որ արվել է Հաննովերում անցկացվող ամենամյա CeBIT համակարգչային տոնավաճառի առիթով, թե՛ Բեռլինին, թե՛ Բրյուսելին հորդորում է Թուրքիայի հետ բոլոր ասպարեզներում գործակցությունը սերտացնել: «Ի՞նչ դեր է խաղում Թուրքիան Եվրոպայի համար» իր իսկ հնչեցրած հարցին նախկին կանցլերը պատասխանում՝ հսկայ է, այն տնտեսական եւ քաղաքական կայունության խարիսխ է:

«Թուրքիայի հանդեպ թերահավատություն կա նաեւ իր պատմությանը հարաբերվելու իմաստով՝ մասնավորապես Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հայկական փորձամասնության հանդեպ իրականացրած կոտորածների հիշողությամբ, որ շատերը որպես ցեղասպանություն են որակում» թերթի ակնարկին սոցիալ դեմոկրատ ԳԴՀ նախկին կանցլերը պատասխանում է». Ոմանք դեպքերը նույնիսկ Հոլոքոսթի հետ են նույնացնում: Սա անթույլատրելի է եւ հարաբերականացնում է Հոլոքոսթը, առաջին հերթին գերմանացիները պիտի առարկեն: Թուրքիայի սխալը վարչապետ Էրդողանի մոտ չէ, նրա ղեկավարմամբ է պատմությունը վերանայվում, պատճառները տասնամյակներ առաջ քեմալականների եւ զինվորականության դերերի իդեալականացման մեջ է: Այդ պատճառով Հայկական թեման տեւական ազդեցություն կգործի, Էրդողանին հաջողվել է վերջապես Թուրքիայում քաղաքականության վրա զինվորականության գերիշխող դերն ավարտել, որը վճռական առաջընթաց է քաղաքացիական հասարակության ճանապարհին»:

Հայոց ցեղասպանությունը հարաբերականացնելու Գերհարդ Շրյոդերի փորձը խիստ դժգոհություն է առաջացրել գերմանահայ համայնքում: Ոմանք մտածում են դասական հայց հարուցել նախկին կանցլերի դեմ, իսկ Գերմանահայոց կենտրոնական խորհուրդը, դատապարտելով Շրյոդերի բնորոշումները, բողոքի նամակ է հղել զանգվածային լրատվամիջոցներին:

Ի դեպ, Շրյոդերի հիշյալ հարցազրույցին հետեւել է Էրդողանի հետ «Հաննովերիշե ալգեմայնեի» հարցազրույցը, ուր ի թիվս այլ հարցերի խոսվում է Հայաստանի հետ բնականոն հարաբերություններ հաստատելու հարցի մասին: Մարտի 1-ին ավստրիական «Դեր Շտանդարտին» հյուրընկալած ՀՀ արտգործնախարար Նալբանդյանի հարցազրույցը անուղղակի պատասխան է Էրդողանի՝ միջազգային հանրությանը մոլորեցնելու, հարցը պատմաբանների հանձնաժողովի առկայությամբ պայմանավորելու կրկնություններին:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

Հերթական «ձեռքեղմումին» ընդառաջ

Չնայած Բաֆվում ԱՄՆ դեսպան Մեյթու Բրայզան դեռ փետրվարի կեսերին հայտարարեց, որ մարտի 5-ին Սոչիում հերթական անգամ կհանդիպեն նախագահներ Սարգսյանը, Մեդվեդեւը եւ Ալիեւը, այդ հանդիպման մասին պաշտոնական հայտարարություն եղավ միայն օրերս: Մեկ այլ հարց է, թե ինչո՞ւ Բրայզան շտապեց իր հայտարարությունը անելիս. մի՞թե ոչ այն բանի համար, որ նախ՝ ցույց տա, որ Վաշինգտոնը, անկախ նրանից, թե որտեղ է հերթական նախագահական հանդիպումը, ամբողջովին տիրապետում է հակամարտության խաղաղ բանակցային ընթացքին, երկրորդ՝ որպեսզի հերթական անգամ իրեն զգա որպես Մինսկի խմբի համանախագահ: Ինչեւէ, Բրայզան իրավացի գտնվեց՝ մարտի 5-ին Սոչիում կկայանա այս տարվա համար առաջին Սարգսյան-Մեդվեդեւ-Ալիեւ հանդիպումը, իսկ մինչ այդ հանդիպումը արձանագրենք որոշ փաստեր. անցած շաբաթվա ընթացքում, ըստ ԼՂՀ ՊԲ հայտարարության, ադրբեջանական կողմը հրադադարի ռեժիմը խախտել է 170 անգամ՝ ԼՂՀ պաշտպանական դիրքերի վրա արձակելով 1400 կրակոց: Փետրվարի 17-ին ղարաբաղա-ադրբեջանական շփման գոտու հյուսիսարեւելյան հատվածում՝ Զաբբերի ուղղությամբ ադրբեջանական կողմը դիմել էր դիվերսիոն գործողության: Այս իրադարձությունից մի քանի օր անց միայն ադրբեջանական աղբյուրները հաղորդեցին ադրբեջանական բանակի 8 կամ 7 զոհերի մասին: Այս համատեքստում կարեւոր կլինի, եթե նախագահ Մեդվեդեւը Սոչիում հիշեցնի ադրբեջանական կողմի գերագույն գլխավոր հրամանատարին նախորդ տարի Աստրախանում կրկին եռաչափ ֆորմատով ձեռք բերված պայմանավորվածությունների մասին. այն է՝ հումանիտար գործակցություն, ռազմագերիների ու զոհվածների աճյունների փոխանակում. չէ՞ որ պարզ ճշմարտություն է, եթե չիրականացվեն դիվերսիոն գործողություններ, հրադադարը չխախտվի 170 անգամ, չարձակվեն 1400 կրակոցներ, էլ չենք ասում՝ դիպուկահարները դուրս գան շփման առաջին գծից, չեն լինի ոչ զոհվածներ, ոչ ռազմագերիներ: *Տես էջ 8*

«Stop, Գեորգի Վանյան, Վահրամ Պետրոսյան...»

Ես արվեստի մարդ չեմ: Ես հասկանում եմ, որ բարոյական իրավունք չունեմ միանշանակ գնահատականներ եւ եզրակացություններ տալու Վահրամ Պետրոսյանին եւ նրան ճնշադատող մասնագետներին, եթե հարցը վերաբերում է արվեստին, երգին, հայկական երաժշտությանը եւ մշակութային այլ բնագավառներին:

Ես երբեք չեմ սիրել ադրբեջանական մուղամը եւ կլկլոցը: Ինչպես եւ թուրքականը: Ես երբեք չեմ ցանկանա, որ հայկական երգը նմանվի ադրբեջանականին եւ թուրքականին: Բայց ես նաեւ պարտավոր եմ հայտնել իմ անհամաձայնությունը Վահրամ Պետրոսյանին ճնշադատողներին, որոնք տալիս են հետեւյալ հիմնավորումը:

«Ազգը» «Stop, Գեորգի Վանյան, Վահրամ Պետրոսյան...» հոդվածում գրում է. «Սակայն «Ուրբաթ» ակումբում նրա սիրո խոստովանությունը՝ ադրբեջանական եւ թուրքական երաժշտությանը, ստիպեց մեզ անդրադառնալ նրան»:

Այսինքն, եթե Վահրամ Պետրոսյանը «ադրբեջանական եւ թուրքական» բառերի փոխարեն օգտագործեր «ֆրանսիական եւ գերմանական» բառերը, ապա «**Ազգ**» օրաթերթը չէր անդրադառնա այդ թեմային: Այսինքն, Վահրամ Պետրոսյանը ճնշադատվում է մի բանի համար, որը դեռ ոչ մի կաթ չունի այդ երգերի երաժշտությանը եւ ոճային որակներին:

Միգուցե հեղինակը համարում է, որ «ադրբեջանական եւ թուրքական» երգերը եւ երաժշտությունը ընդհանրապես չեն կարող լինել ճաշակով եւ որակով: Եթե ես ճիշտ եմ հասկանում հեղինակին, ապա ինձ թույլ եմ տալիս կասկածել, որ որեւէ մեկը մասնագիտական եւ բարոյական իրավունք ունի հանրությանը հայտարարելու, որ ադրբեջանական եւ թուրքական երգն ու երաժշտությունը անճաշակ եւ անորակ են ի սկզբանե:

Իսկ եթե հեղինակը նկատի ուներ, որ անթույլատրելի է ադրբեջանական եւ թուրքական երաժշտական ոճերը ներմուծել հայկական երաժշտության եւ երգերի ասպարեզ, ապա նորից անհասկանալի է դառնում «Ազգում» նման մտքերի ներկայացումը:

Ստացվում է, որ անթույլատրելի է ոչ միայն «ադրբեջանական եւ թուրքական» երաժշտական ոճեր ներմուծելը, այլեւ ընդհանրապես այս բնագավառում օտար ազդեցությունների առկայությունը: Եթե հեղինակը դեմ չէ օտար ազդեցություններին եւ դեմ է միայն «ադրբեջանական եւ թուրքական» ազդեցությանը, ապա կարելի է ասել, որ հեղինակը ազգայնամոլ է, եւ նման հրապարակումը ռասիզմի բացահայտ օրինակ է:

Ցավոք, վերջին միտքը հիմնավորվում է վերնագրում Գեորգի Վանյան անվան առկայությամբ:

Հարգանքով՝
ՎԱՀԵՔԻ ՄԱՐԿԱՐՅԱՆ

հանրահավաք

Տեր-Պետրոսյանն իշխանություններին տվեց 2 շաբաթ...

1-ին էջից

Ելույթ ունեցան նաեւ 2008թ. մարտի 1-ին զոհված Գոռ Քլոյանի եւ Տիգրան Խաչատրյանի ծնողները: Պահանջելով արդար հետաքննություն եւ պատիժ՝ նրանք տեղեկացրին, որ ստեղծվել է «Մարտի 1» հասարակական կազմակերպություն, որի նպատակն է աջակցել մարտի 1-ի զոհվածների ու վիրավորների ընտանիքներին, նաեւ աշխատել՝ բացառելու ապագայում «մարտի 1-երի» կրկնությունը:

Արամ Մանուկյանի փոխանցմամբ՝ հանրահավաքն ուղիղ եթերով հեռարձակվում էր մի կայքէջի միջոցով, եւ Անգլիայի, Ֆրանսիայի ու Եվրոպական մի շարք երկրներում ապրող հայերը հնարավորություն ունեին օնլայն ռեժիմով հետեւելու հանրահավաքին:

«Հայաստանն այնքան էլ հեռու չէ Աֆրիկայից, հիման շաս մոտ է», պատասխանեց «Հանրապետություն» կուսակցության նախագահ Արամ Սարգսյանը ժողովրդի կոչերին՝ իշխանափոխություն անցկացնել հենց հիմա:

Հանդարտության կոչ արեց ՀԱԿ համակարգող Լեւոն Ջուրաբյանը՝ հավելելով, որ իշխանությունները դեռ կարող են իրենց հետ երկխոսության մեջ մտնել:

ՀԺԿ նախագահ Ստեփան Դեմիրճյանն էլ իր ելույթը չէր ավարտել, երբ հավաքվածները սկսեցին բացականչել. ձեռքին երկու սպիտակ մեխակ նախ ամբոխի մեջ հայտնվեց «Ժառանգություն» կուսակցության նախագահ Ռաֆֆի Հովհաննիսյանը, հետո նաեւ խմբակցության ղեկավար Սյոռոպա Սաֆարյանը, Զարուհի Փոստանջյանը, Լարիսա Ալավերդյանը, Անահիտ Բախչյանը, Արմեն Մարտիրոսյանը, «Ժառանգության» վարչության փոխնախագահ Ռուբեն Հակոբյանը: Ստեփան Դեմիրճյանը ստիպված լռություն խնդրեց՝ ընդհատված ելույթը շարունակելու համար: «Ժառանգություն» կուսակցության ներկայացուցիչները ամբիոնի մոտ չբարձրացան եւ ժողովրդի մոտ կանգնելով հետեւեցին հանրահավաքի ընթացքին: Սակայն ոչ այդ պահին ելույթ ունեցող Ստեփան Դեմիրճյանը, ոչ էլ ՀԱԿ այլ գործիչներ չողջունեցին նրանց:

ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը հանրահավաքի անունից նախ հայտարարություն արեց:

Տեր-Պետրոսյանի մեկնաբանությամբ՝ հայտարարության համար հիմք են ծառայել այն փաստերը, որ իշխանություններն անդառնալի հարված են հասցրել հայ ժողովրդի արժանապատվությանը՝ համաձայնելով Հայոց ցեղասպանությունը կասկածի տակ դնող հայ եւ թուրք պատմաբանների հանձնաժողովի ստեղծմանը, ընդունել են Հայաստանում օտարալեզու դպրոցների հիմնադրման մասին հակասահմանադրական օրենք, ապաշնորհ ու անսկզբունքային քաղաքականության հետեւանքով գրեթե վիժեցրել են բանակցությունների միջոցով Ղարաբաղի հարցի հայանպաստ լուծման հնարավորությունն ու հակամարտությունը հասցրել են նախապատերազմական վիճակի, ցինիկաբար խափանել են մարտի 1-ի բացահայտումը, երկրում ստեղծել են ամենաթողություն, անպատժելիություն, համատարած կողոպուտ:

Ներկայացնելով երկրում ստեղծված իրավիճակը՝ առաջին նախագահը իշխանություններին մինչեւ մարտի 15-ը (այդ օրը Հայաստան կժամանեն Հայաստանի հարցով Եվրոխորհրդի համազգեկուցողները) ժամանակ տվեց՝ պահանջելով ազատ արձակել քաղաքական հայացքների համար բանտերում նստած բանտարկյալներին, ստեղծել մարտի 1-ի իրադարձությունների ուսումնասիրման անկախ միջազգային հանձնաժողով: Փոխհատուցել մարտի 1-ի ոճրագործություններից տուժած քաղաքացիների նյութական վնասները՝ սպանվածներից յուրաքանչյուրի ընտանիքին՝ 1 մլն դոլար, իսկ վիրավորներին՝ 100.000 դոլար:

Դադարեցնել Ազատության հրապարակում հանրահավաքների անցկացման արգելքը, վերականգնել դարաբաղյան կարգավորման բանակցությունների նախկին ձեւաչափն ու ԼՂՀ-ն ներկայացնել որպես հակամարտության լիիրավ կողմ:

«Չեղյալ հայտարարել բացօթյա փողոցային առեւտրի արգելքը, վերականգնել ներմուծվող ապրանքների փոխադրավարձ-մաքսավճարների նախկին չափը, նվազագույն աշխատավարձը դարձնել 200 դոլար, գործազրկության նպաստը՝ 100 դոլար, միջին կենսաթոշակը՝ 112 դոլար, (Զարմանալի է, որ ՀԱԿ առաջնորդը ինչո՞ւ չպահանջեց բարձրացնել ավելին, օրինակ՝ 1000 կամ 2000 դոլար եւ ավելի:- խմբ.:) մամուլում հրապարակել Հայաստանի նախկին եւ ներկա բոլոր պետական պաշտոնյաների ու նրանց ընտանիքի անդամների ունեցվածքն ու եկամուտները, խայտառակ թերացումների, մասնագիտական ապաշնորհության համար զբաղեցրած պաշտոններից հեռացնել վարչապետ Տիգրան Սարգսյանին, փոխվարչապետ Արմեն Գեւորգյանին, ԿԲ նախագահ Արթուր Ջավադյանին, ՊԵԿ նախագահ Գագիկ Խաչատրյանին, Երեւանի քաղաքապետ Կարեն Կարապետյանին, գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանին, ԱԱԾ տնօրեն Գորիկ Հակոբյանին, Ոստիկանության պետ Ալիկ Սարգսյանին, հատուկ ճնշական ծառայության պետ Անդրանիկ Միրզոյանին եւ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետ Հայկ Հարությունյանին», ասաց ՀՀ առաջին նախագահը:

Ընդհանուր առմամբ Լեւոն Տեր-Պետրոսյանն իր պահանջները շարադրել էր 14 կետում, եւ միայն այդ կետերում առկա պահանջների զգալի մասի կատարման պարագայում ՀԱԿ-ը գործնական երկխոսություն կսկսի իշխանությունների հետ, օրակարգում ունենալով առաջիկա ամիսներին արտահերթ նախագահական եւ խորհրդարանական ընտրությունների անցկացնելու միակ հարցը:

Պահանջները ներկայացնելուց հետո Լեւոն Տեր-Պետրոսյանն առաջարկեց քվեարկություն անցկացնել: «Ժառանգություն» խմբակցության անդամները «քվեարկությանը» չմասնակցեցին, սակայն ձայների բացարձակ մեծամասնությամբ հայտարարությունն «ընդունվեց»:

Մարտի 17-ին կայանալիք հանրահավաքի ժամանակ ՀԱԿ ներկայացուցիչները կանդրադառնան իշխանությունների արձագանքին ու համապատասխան եզրակացություններ կանեն:

Հանրահավաքին հաջորդած երթի ժամանակ մասնակիցները ծաղիկներ դրեցին Մյասնիկյանի արձանին ու մեկ րոպե լռությամբ հարգեցին մարտի մեկի զոհերի հիշատակը:

ՀԱՍՄԻԿ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Խորին ցավով

Եթե ընդունենք, որ կյանքում ամենաբարդը շիտակ ապրելու կամքն է, ուրեմն կգիտակցենք նաեւ այդպիսի մարդկանց բաժին հասած ճանապարհի դժվարությունը՝ անձնական թե ազգային:

Զգացմունքային ու կարեկից սիրտ էր բաբախում Հասմիկ Ավետիսյանի մեջ: Անհանգիստ սիրտ, որ ջերմ բաբախում էր մերձավորների ու բոլոր նրանց համար, ում ինքն իրեն մոտ էր ընդունում: Գուցե դժվարահաճ էր այդ ընտրության մեջ, բայց խորքում իրավացի էր, որովհետեւ ներքին սլաքը ճշմարտության ու արդարության կողմն էր, զգայուն էր, ուրիշի ցավը ըմբռնող-վերապրող: Եվ եթե բռնկուն էր երբեմն այդ զգացմունքը ու երբեմն էլ ըմբոստ, ապա դարձյալ ճշմարտասիրությունն էր պատճառը, ուղղամտությունը:

Ապրեց կարճ, թեեւ լեցուն էր կյանքով, լայն-խաժ աչքերի մեջ՝ լույս ու ջերմություն: Ու պատճառը նաեւ մեր կյանքն էր ու մեր միջավայրը, բայց ամենից ավելի՝ իր անհասական նկարագիրը, իր վերաբերմունքները, անտարբեր չապրելու, անարդարին ու կեղծիքին չհամակերպվող իր բնույթը: Հանրային կյանքի մեր տագնապներն ու անհանգստությունները, սոցիալական անարդարություններն ու բարոյական ցնցումները, արժեքների ներկայիս վայրիվերումները ապրում էր անկեղծորեն ու ապրում կրքով ու ամենակարեւորը՝ բարձրաձայնող էր, արտահայտվող, խոսքը անսեթեւեթ էր, ուղիղ, երբեմն նույնիսկ անսպասելի կտրուկ, անգամ՝ շեշտակի սուր:

Միջավայրի համատարած լռության ու անտարբերության մեջ ինքն այն քչերից էր, որ ուներ իր մեջ ազնվությունն ու համարձակությունը՝ լավին լավ ասելու, վատին՝ վատ: Մեզ շա՜տ պակասող այդ շիտակությունն ու արդարամտությունը: Ու որքան ափսոսանք ուներ կորսվող լավի ու ցցվող միջակի, համատարած գորշության հանդեպ որքան արհամարհանք՝ անթաքույց: Այդ ափսոսանքն էր, որ հաճախ իր հայացքը հետ էր տանում, հիշեցնում նախկին աշխատանքային միջավայրը, կարգ ու կանոնն ու պատասխանատվությունը: Իսկ նա անցել էր աշխատանքային կայուն դպրոց՝ խորհրդային ղեկավար այրերի գլխավորությամբ աշխատելով Սփյուռքի կոմիտեում, նախագահ Վարդգես Համազասպյանի, ապա Կարլեն Դալլաքյանի մոտ: Ու հաճախ հիշում էր այդ թթնոլորտը՝ մի տեսակ կարոտով. «Ի՜նչ մարդիկ էին»:

Իր աշխատանքային կենսագրությունը «Ազգ» օրաթերթին, հիմնադրման առաջին տարիներից կապեց: Գործավարն էր ու գրաբար միաժամանակ: Բանասիրական կրթությունը ոչ միայն զուտ լեզվական գրագիտության առումով էր առավելություն, նաեւ տեքստերի հանդեպ վերաբերմունքի. կարեւոր եւս մի հանգամանք՝ ամենաանընթեռնելի ձեռագրեր վերծանելիս ինքը փնտրված էր:

1992-94 թվականներին եւ դրանից հետո «Ազգի» մատենաշարով հրատարակած բոլոր գրքերի համակարգչային շարվածքը իր վարժ մատների տակով անցավ: Այդ թվում՝ «Ազգ Մշակույթ. Հավելվածի» շատ հոդվածներ եւս:

Մենք կորցրեցինք «Ազգի» բազմամյա աշխատակցուհուն, շիտակ ու զգայուն կնոջը, մտակից, ուրտակից մտերմուհուն: Կորցրինք շա՜տ անսպասելի, անհավասալի արագ: Արձակուրդը վերցրեց Պետերբուրգ մեկնելու, հիվանդ քրոջը տեսակցելու: Ինքն արդեն վերջին տարիներին տկար էր, վատառողջ, ու հիվանդ սիրտը չդիմացավ: Ջհասցրին կանխել, կրկնակի կաթվածը ընդհատեց ջահել կյանքը. հեռացավ 55 տարին նոր-նոր բոլորած-անավարտ մի կյանք՝ հուսաբեկ այս ճանապարհի...

... Մենք երբեմն նրան այդքան երկար չէինք սպասել: Անսովոր սպասում էր, որի ավարտի հանդիպումը վերջին հրաժեշտն էր նրա հետ: Էջմիածնի հին գերեզմանատանը մեր սպասումը թվում էր, անվերջ է:

Այլ իրականություն էր ու խոսքն էր ուրիշ: Այստեղ ձայները գալիս էին շատ հեռվից, անծանոթ խորքերից, ընդհատ-ընդհատ, անգույն, անկյանք: Դուդուկի մեղեդին վիրավոր ուրտ արձագանքն էր հնչեցնում: Հնչյունները կախվում էին մանրաձյուղ, չոր ծառերից, իջնում, փափուկ տարածվում թարմ շիրմաթմբին: Լռություն էր:

Այնտեղ՝ տաճարում հանգչում էին մեր՝ քիչ առաջ վառած մոմերը...

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԳԱՅԱՆ
01.03.2011

Երեւանում կրճատվելու է միկրոավտոբուսների թիվը

Երեւանում գործում է ներքաղաքային միկրոավտոբուսային 112 երթուղի եւ շահագործվում ընդհանուր առմամբ 2660 միկրոավտոբուս: «Արմենտրեսի» փոխանցմամբ՝ ուղեւորափոխադրման համար օրական երթուղի են դուրս գալիս 1900-2000-ը: Քաղաքապետարանի հաստատած մայրաքաղաքային տրանսպորտի նոր ցանցի համաձայն՝ 2011-ի ընթացքում սպասվում է ներքաղաքային միկրոավտոբուսային երթուղիների կրճատում: Սպասվում է նաեւ միկրոավտոբուսների քանակի կրճատում: Մի շարք միկրոավտոբուսներ փոխարինվելու են մեծ ու միջին տարողունակությամբ ավտոբուսներով: Իսկ արդեն գործող ավտոբուսային պարկերը կհամալրվեն նոր մեքենաներով:

Ի. Պ.

Orange Կինո. երկու տոմս մեկի գնով

Orange-ը մեկնարկեց Orange Կինո ծառայությունը, որի շնորհիվ Orange-ի ձայնային ծառայությունների բաժանորդները կկարողանան շաբաթվա որեւէ օր հրավիրել կինո իրենց ընկերներից մեկին՝ վճարելով միայն մեկ տոմսի արժեքը:

«Արդեն մեկ տարի գործունեություն ծավալելով Հայաստանում՝ Orange-ը հանդես է եկել հիմնականում երաժշտական նախաձեռնություններով: Իսկ գարնան առաջին օրը մենք անակնկալ ենք մատուցում նաեւ կինոմաններին: Այսօր սկիզբ է առնում Երեւանի «Մոսկվա» կինոթատրոնի եւ Գյումրիի «Հոկտեմբեր» կինոթատրոնի հետ երկարաժամկետ մի համագործակցություն, որն անկասկած կաշխուժացնի կինոյի նկատմամբ հետաքրքրությունը Հայաստանում: Orange Կինոյի շնորհիվ այսուհետեւ շաբաթվա բոլոր օրերը կինոյի օրեր են լինելու», ասաց Orange-ի գլխավոր տնօրեն Բրունո Դյութուան:

Orange Կինոն տարբեր անվանումներով արդեն իսկ գործում է Orange-ի ներկայության բազմաթիվ երկրներում եւ զգալիորեն փոխել է այդ երկրներում կինոհաճախման մշակույթը:

«Մենք կարծում ենք, որ յուրաքանչյուր ֆիլմ ավելի լավն է դառնում, երբ մենակ չես նայում: Ահա թե ինչու մենք նախաձեռնեցինք Orange Կինոն, որը մեր բաժանորդներին թույլ է տալու միշտ երկուսով գնալ կինո: Մեր նախնական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մեր բաժանորդների, եւ հատկապես երիտասարդ բաժանորդների համար ֆիլմի տոմսի գինը կարող է խոչընդոտ դառնալ իրենց հետաքրքրող ֆիլմերը դիտելու համար: Այսուհետեւ գինն այլեւս խոչընդոտ չէ», ասաց Orange-ի մարկետինգի տնօրեն Արամ Մկրտչյանը:

Ծառայությունից կարող են օգտվել Orange խոսքեր, Ամեն ամիս եւ Բիզնես ծառայությունների բաժանորդները շաբաթվա ամեն օր՝ օրական մեկ անգամ: Ծառայությունն ակտիվացնելու համար անհրաժեշտ է ուղարկել kino բառը 5555 կարճ համարին, սանալ ծածկագիրը, որի ժամանակ բաժանորդի հաշվից կգանձվի 1500 դրամ, այնուհետեւ նույն օրն իսկ ծածկագիրը ներկայացնել Երեւանի «Մոսկվա» կամ Գյումրիի «Հոկտեմբեր» կինոթատրոնների տոմսարկղ եւ սանալ այդ օրը որեւէ ֆիլմի երկու տոմս: Orange խոսքերի բաժանորդները ծառայությունից օգտվելու համար պետք է հաշվին ունենան նվազագույնը 2000 դրամ:

Երեւանում Orange Կինոն արդեն հասանելի է Orange-ի ձայնային ծառայությունների բաժանորդների համար, իսկ Գյումրիում կմեկնարկի հաջորդ շաբաթ:

Orange Կինոյի մանրամասներին ծանոթանալու համար այցելեք kino.orangearmenia.am:

ԱՄԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանը կմեկնի Հնդկաստան, ապա՝ Արաբական Միացյալ Էմիրություններ

Հնդկաստանի Հանրապետության Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, վարչապետի ազգային անվտանգության գծով խորհրդական Շիվ Շանկար Մենոնի եւ Արաբական Միացյալ Էմիրությունների Ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի գլխավոր քարտուղար Սաիֆ Սուլթան ալ Սարհանիի հրավերով մարտի 1-8-ը աշխատանքային այցով Հնդկաստան, ապա Արաբական Միացյալ Էմիրություններ կմեկնի Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանի գլխավորած պատվիրակությունը: Պատվիրակությունը կհանդիպի Հնդկաստանի փոխնախագահի, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Շիվ Շանկար Մենոնի, արտաքին գործերի, պաշտպանության, ներքին գործերի պետական նախարարների, Հնդկաստանի պաշտպանական հետազոտությունների եւ վերլուծությունների ինստիտուտի ղեկավարության եւ այլ պաշտոնյաների հետ:

Արաբական Միացյալ Էմիրություններում Արթուր Բաղդասարյանի գլխավորած պատվիրակությունը կհանդիպի Աբու Դաբիի գործադիր խորհրդի ղեկավար, թագաժառանգ Մուհամմադ բեն Զայիդ ալ Նահյանի, Արաբական Միացյալ Էմիրությունների Ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի գլխավոր քարտուղար Սաիֆ Սուլթան ալ Սարհանիի, արտաքին առեւտրի նախարար Շեյխա Լուբնա ալ Կասիմի եւ բարձրաստիճան այլ պաշտոնյաների հետ:

Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի մամուլի գրասենյակ

Տեղական արտադրությունը կարող է մեղմել գնաճը

Հայրենական արտադրողների միության նախագահ Վազգեն Սաֆարյանն ասում է, որ Հայաստանում աննախադեպ գնաճ է արձանագրվել. «Անցյալ տարվա կտրվածքով՝ 9,4 տոկոս, իսկ այս տարվա հունվարի տվյալներով՝ արդեն 10 տոկոսից ավելի է գնաճը»: Երեկ «Հայելի» ակումբում Վազգեն Սաֆարյանը կարծիք հայտնեց, որ գնաճը մեղմելու համար պետք է ավելացվեն տեղական արտադրության ծավալներն ու այդ ուղղությամբ քայլեր ձեռնարկվեն. «Անցյալ տարի արտահանել ենք 131 միլիոն դոլար արժողությամբ ապրանքներ, իսկ ներմուծել ենք 3 անգամ ավելի արժողություն ունեցող ապրանքներ»: Նրա խոսքով՝ հատկապես սահմանային շրջաններում գյուղացիներին ջուրը պետք է ձրի մատակարարվի, որովհետեւ այսօր գյուղացին կարծես խռովել է հողից ու չի մշակում: Վ. Սաֆարյանը հավելեց, որ կառավարությունը կարող էր մեղմել գնաճը. «Մոտավորապես 400 միլիոն դոլարի սննդամթերք ենք ներմուծում, այնինչ գոնե դրա կեսը կարելի է տեղում արտադրել ու մեղմել գնաճը՝ չկապելով դա համաշխարհային պրոցեսների հետ»:

Մյուս բանախոսը՝ Ազգային Ժողովի սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ **Հակոբ Հակոբյանը**, գյուղացիներին ջուրն անվճար մատակարարելու հարցում չհամաձայնեց Վազգեն Սաֆարյանի հետ՝ պատճառաբանելով, որ այդպես արտադրողների համար կստեղծվեն անհավասար պայմաններ. «Պետք է ստեղծել հավասար պայմաններ արտադրության համար»: Վերջինս նաեւ կողմ է կատարյալ սուբսիդավորմանը:

Ի. Պ.

Ավանդատուների ընտրությունը՝ «Յունիբանկ»-ը ժամկետային ավանդներով ՀՀ բանկային համակարգի առաջատարն է

2010թ.-ի արդյունքներով «Յունիբանկ»-ը ժամկետային ավանդների ծավալով պահպանել է առաջատարի դիրքը ՀՀ բանկային շուկայում եւ զբաղեցրել է առաջին տեղը ֆինանսական միջոցների կայունության ցուցանիշով: Բանկի ժամկետային ավանդները 01.01.2011թ.-ի դրությամբ կազմել են 68 մլրդ դրամ, որից 63 տոկոսը բաժին է ընկել ֆիզիկական անձանց ավանդներին: Բանկի ընդհանուր պարտավորություններում ժամկետային ավանդները գերազանցել են 68 տոկոսը: Ցպահանջ պարտավորությունների ծավալը կազմել է 12,4 մլրդ դրամ՝ 2010թ.-ի վերջին եռամսյակում ավելանալով 23,2 տոկոսով: Ցպահանջ պարտավորությունների առյուծի բաժինը՝ 8,8 մլրդ դրամը, բաժին է ընկել իրավաբանական անձանց: «Յունիբանկ»-ի ընդհանուր պարտավորությունների ծավալը գերազանցել է 99,5 մլրդ դրամը, ավանդների ծավալը կազմել է ավելի քան 80 մլրդ դրամ:

Ցուցանիշների շարունակական աճը եւ ավանդատուների հոսքը նշանակում է, որ «Յունիբանկ»-ի նկատմամբ բնակչության վստահությունը մնացել է բարձր մակարդակի վրա: Հաճախորդների թվաքանակի ավելացումը եւ բանկի մրցակցային դիրքերի ամրապնդումն իրականացվում են լավագույն բանկային չափանիշներին համապատասխան սպասարկման որակի ապահովման, արդիական բանկային ծառայությունների եւ գործիքների մշակման, ինչպես նաեւ խաչաձեւ վաճառքների զարգացման շնորհիվ:

«Յունիբանկ»-ը հատուկ ուշադրություն է դարձնում նաեւ մասնաճյուղային ցանցի ընդլայնմանը, այդ թվում՝ մարզերում: Միայն այս տարի նախատեսվում է բացել 8 նոր մասնաճյուղ: Այդպիսով, մինչեւ տարեվերջ, բանկը կունենա 42 մասնաճյուղ:

2010 թվականը «Յունիբանկ»-ի համար արդյունավետ էր նաեւ արտարժութային գործառնությունների տեսակետից: Բանկի զուտ շահույթը արտարժութային գործառնություններից հաշվետու տարում կազմել է 1,4 մլրդ դրամ, ինչը ՀՀ բանկային համակարգի լավագույն ցուցանիշն է:

Բանկի կայունությունը գնահատվել է նաեւ Moodys Investors Service միջազգային վարկանիշային գործակալության կողմից: 2010թ.-ին «Յունիբանկ»-ին շնորհվել է ֆինանսական կայունության E+, արտարժույթով եւ ազգային դրամով ավանդների Ba3 երկարաժամկետ եւ NP կարճաժամկետ վարկանիշերը: Բոլոր վարկանիշերն ունեն «Կայուն» կանխատեսումը:

Գնային հարցերը միշտ էլ հայ հանրության ուշադրության կիզակետում են գտնվել: Դրա տեսանելի ու անտեսանելի դրսեւորումները լրջագույն խնդիրներ են հարուցում, հասարակական հուսալիության պատճառ դառնում: Գնաճի զսպման մասին յուրաքանչյուր խոսք տեղին է համարվում, անգամ ուշացած: Այնպես որ «Ազատություն» ռադիոկայանի փետրվարի 20-ի հաղորդման ընթացքում Վրաստանի թղթակցի տեղեկատվությունը՝ երկրում սպիտակ հացի 500 գրամը 70-80 թեթրիով վաճառելու մասին, իր պատճառն ունի: Նախորդ օրը ՀՀ գյուղնախարար Ս. Կարապետյանը հայտարարել էր, որ տարածաշրջանի երկրների համեմատ ՀՀ-ում հացի գները առավել մատչելի են:

Եգիպտացորեն. թիվ 1 մշակաբույսն աշխարհում

Հիմնական բուսատեսակների արտադրությունն աշխարհում 2007-ին. ցորեն՝ 607 մլն տոննա, բրինձ՝ 652 մլն տ, եգիպտացորեն՝ 785 մլն տ

Զեյթուն բնակությանս վայրի սուպերմարկետներից մեկում 520 գրամ պիտակով ազգային մատնաքը գնահատված էր 180 դրամ, այնպես որ լրացուցիչ 20 գրամի դիմաց 30 դրամ գինը ոչ մի կերպ չի տեղավորվում առավել մատչելի որակման մեջ: Հուսանք, որ հարգարժան նախարարը կամ կառույցի համապատասխան ծառայությունը առաջիկայում որեւէ պարզաբանում կտան հայտարարության սկզբնաղբյուրի կապակցությամբ, որը չէիմ ասի, թե սկզբունքային ինչ-որ հարց է, բայց դրա անտեսելն էլ բանի նման չէ, ինչպես առաջացնում է 100-հազարավոր հայաստանաբնակների ակտիվ հետաքրքրությունը: Հարցը թերեւս առավել հրատապություն կստանա, եթե հիշենք, որ Վրաստանի թղթակիցը նաեւ ասաց, որ իր երկիրը ներմուծում է ցորենի պահանջարկի 85 տոկոսը, մեր 65 տոկոսի պարագայում: Այնպես որ հանապազօրյա հացը մեզանում բարձր գին ունի ոչ միայն հարեւան երկրի, այլեւ հեռավոր Ավստրիայի համեմատ, ուր վերջին տարիներին հաճախ է առիթ եղել լինելու:

Այստեղ որեւէ գաղտնիք չկա: Ծովերից հեռու Եվրոպայի կենտրոնում գտնվող այս երկիրը 1 բնակչի հաշվով 1700 քմ վարելահող ունի, ճիշտ այնքան, որքան մեր Մայր Հայաստանը: Բայց չգիտես ինչպես, մեզանց համար իհարկե, Ավստրիայի գյուղատնտեսության ու պարենային ապահովության պատասխանատուները կարողանում են յուրաքանչյուր տարի 1,5 մլն տոննա ցորեն արտադրել, մի բան ավելի, քան պահանջվում է 8,2 մլն բնակչության պահանջը բավարարելու համար: Հանրահայտ է, որ մարդ արարածին նորմալ գոյատեւելու համար, հացի, մակարոնեղենի ու հրուշակեղենի սպառման առումով, 150 կգ այլուրը բավարար ցուցանիշ է, որը կարելի է սանալ 1 ավստրաբնակի հաշվով երկրում արտադրվող մոտ 180 կգ ցորենից: Վերջին այս ցուցանիշին մենք որոշ տարիներ մոտեցել ենք, երբ հացահատիկի արտադրությունը կազմել է 450 հզ. տոննա, 1 հայաստանաբնակի հաշվով՝ 150 կգ: Բայց անգամ այս պարագայում հաջորդ տարի ՀՀ ներկրվող ցորենի ու ալյուրի քանակներն էապես չեն նվազել, որեւէ գնանկում չի արձանագրվել: «Ինչու» հարցը տրամաբանված բացատրություն չունի այն պարզ պատճառով, որ հայտնի չէ, թե ինչ է արվում այդ հարյուրհազարավոր տոննա հացահատիկը, քանի կգ է դրանից պետական պահուստային ֆոնդ մթերում կազմակերպվել, որ ալրաղացներն են հայաստանյան ցորենի գնումներ իրականացրել եւ որ օրու գործարաններն են երկրում արտադրված հումքից խմիչք թորել: Չենք խոսում անասնակերի հիմնական բաղադրիչ օգտագործելը ապահովում է կովի տարեկան 8-10 հզ. լ կաթնատվություն, մսացու անասնատեսակների օրական 1000 գրամից բարձր քաշաճ: ՀՀ կառավարության բարի ցանկությունը՝ ավստրիական կովերի ներկրմամբ մասամբ իսկ լուծել մեզանում կաթի բավարար արտադրությունը, հակառակ արդյունքը տվեց, հանգեցրեց կաթի մթերման գնի բարձրացման: Խնդիրը թերեւս անբավարար կերարտադրության մեջ է:

ՀՀ շուրջ 1000 գյուղական համայնքների, դրանցում ընդգրկված 340 հզ. գյուղտնտեսությունների, դրանք կազմող 1,2 մլն գյուղացիության ու ՀՀ պետության պարենային ապահովությունն ու անվտանգությունը մեկ հիմնական լուծում ունի, որը համառորեն չեն ցանկանում տեսնել ոլորտի պատասխանատուներն ու երկրի բարձրագույն իշխանավորները: Դա երկիր մոլորակի 4 կողմերում, Հարավաֆրիկյան հանրապետությունից մինչեւ հյուսիսային Բելգիա, Չինաստանից ԱՄՆ ու Բրազիլիա, եգիպտացորենի 100 մլն-ավոր տոննաներ կազմող արտադրությունն է: 1 հա-ի հաշվով հազիվ 20 կգ սերմի շնորհիվ 10-12 տոննա բերքի ստացումը արդեն մեկ տասնամյակ է այն դարձրել է թիվ 1 մշակաբույս համաշխարհային առումով 800 մլն տոննա բերքի առկայությամբ, երբ ցորենը մնում է 600-650 մլն տոննայի սահմաններում: Հայաստանի բոլոր ջերմաշաս տարածքներում, իսկ առավելապես Արարատի եւ Արմավիրի ջրովի հողերում այս մշակաբույսը մասամբ աճեցնողները հիանալի բերք են ստանում: Այս ուղղությամբ համապետական որոշակի գործընթաց ծավալվեց 2007-2008 թվականներին, որը հետագայում շարունակություն չունեցավ: Ցավալի իրողություն, քանզի կենդանական ծագման սննդատեսակների տեղական արտադրության հիմնական բաղադրիչ օգտագործելը ապահովում է կովի տարեկան 8-10 հզ. լ կաթնատվություն, մսացու անասնատեսակների օրական 1000 գրամից բարձր քաշաճ: ՀՀ կառավարության բարի ցանկությունը՝ ավստրիական կովերի ներկրմամբ մասամբ իսկ լուծել մեզանում կաթի բավարար արտադրությունը, հակառակ արդյունքը տվեց, հանգեցրեց կաթի մթերման գնի բարձրացման: Խնդիրը թերեւս անբավարար կերարտադրության մեջ է:

Նպատակով օգտագործվող հացահատիկի մասին, քանզի նման պարագայում կունենայինք կաթի ու մսի արդյունավետ արտադրություն, որն իր հերթին մեզանում սովորական դարձած գնաճի չէր հանգեցնի: Քանի դեռ հայ գյուղացու կովը տարին հազիվ 2000 լ կաթ է տալիս, խոշոր մսացուն օրը հազիվ 150 գ քաշաճ ապահովում, հայ գյուղացին իր աղքատությունը հաղթահարելու միակ միջոց համարելու է իր արտադրածի գնի բարձրացումը: Սրան ներմուծողները մասամբ հակադրելու են ներկրվող մսաշելի կաթի փոշին, խոշորի ու թռչնի միսը:

Նման պարագայում հաճախ է հարց առաջանում. իսկ ինչպե՞ս են արդեն հիշատակված Ավստրիայում բարձր արդյունքների հասնում: Պարզ մի պատճառով. նրանք 1,5 մլն տոննա ցորենի կողքին 1,5 մլն տոննա էլ եգիպտացորենի հատիկ են արտադրում: Ցորենից առավել էներգիա պարունակող այս մշակաբույսը ցանքսի համար խիստ պակաս, իսկ բերքատվությամբ առավել ցուցանիշների արդյունքում բարձր վերարտադրություն է երաշխավորում: Իսկ որպես անասնակերի ինչքան շուտ, այնքան լավ: Հիմնավոր խնդիր է եգիպտացորենի բուսայուղի արտադրությունը, հեռանկարում՝ սպիրտի ստացումը որպես ավտոմեքենաներում օգտագործվող բնապահպանական առումով անթերի վառելիք: Եգիպտացորենի հատիկի արտադրությունը երբեմն այնքան է կարեւորվում, որ մշակվում է անգամ Եվրոպայի գեղեցիկ քաղաքների վարչական տարածքներում: Սույն լուսանկարն, օրինակ, արվել է Ավստրիայի 2-րդ քաղաք Գրացի Ռայնինգհաուզ փողոցում: Եվրոպական երկրներ հաճախ այցելող բարեկամ-ծանոթներս վկայում են, որ իրենց շրջագայությունների ընթացքում ամենուր են նկատել այս մշակաբույսը: Իսկ որ Երկիր մոլորակի ամենահզոր տնտեսությունն ունեցող ԱՄՆ-ում 1 միավոր ցորենի կողքին 5-6 միավոր եգիպտացորենի հատիկ են արտադրում, այս մշակաբույսի հիմնարար կարեւորության վերաբերյալ որեւէ անվստահության տեղ չի թողնում:

Թե երբ կհաղթահարվի ՀՀ տնտեսության կայացման հիմնարար համարվող գյուղոլորտում եգիպտացորենի հատիկի 100-հազարավոր տոննաներ աճեցման մեզանում տիրող խոչընդոտը, հիմնավորապես կախված է ՀՀ տնտեսական քաղաքականությունն իրականացնողներից: Քաղաքակիրթ աշխարհը հաց փիչ է սպառում, քանզի հանձին կենդանական ծագման սննդատեսակների բավարար, մատչելի ու որակյալ արտադրության ունի հիանալի այլընտրանք: Հայաստանաբնակներս ունենք քաղաքակրթվածության զգացումը, հարկ է, որ ունենանք նաեւ դրա նյութական այլընտրանքը: Յուրաքանչյուր տարի գործընթացի անտեսումը, ոչնչով չարդարացված ձգձգելը տեսանելի բարդագույն խնդիրներ են ստեղծում հայաստանաբնակներիս, նաեւ ողջ հայության համար:

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ

Շատերը երես են թեքել ՀԴՄ կտրոններից

«Ազգ»-ի փետրվարի 18-ի համարում «Իշխանավորները «քցեցին» ժողովրդին ու հարվածեցին մեր ազգային անվտանգությանը» հոդվածի հրապարակումից հետո խմբագրությունը ոչ ՀՀ կառավարությունից, ոչ էլ պետական եկամուտների կոմիտեից որեւէ հերքում կամ պատասխան չի ստացել: Նշված մարմինները փաստորեն չունեն հրապարակվածին հակադրելու որեւէ փաստարկ, թեեւ սա այն հազվագյուտ դեպքերից է, երբ անկեղծորեն շատ կցանկանայինք սխալված լինել ներկայացված փաստերի եւ եզրահանգումների հարցում:

Հիշյալ հրապարակման մեջ այն կարծիքն էինք հայտնել, որ նախորդ ամիս ՀԴՄ կտրոններով շահումները վճարելու աշխատանքների խայտառակ կազմակերպման, իբրեւ դրա հետեւանք գոյացած հսկայական ու հոգնատանջ, նվաստացուցիչ հերթերի պատճառով շատ մարդիկ երես կթեքեն ՀԴՄ կտրոններից, դրանք այլեւս չեն պահանջի վաճառողներից կամ նույնիսկ կհրաժարվեն վերցնել: Մեր այս ենթադրությունը կամ կանխատեսումը, ցավոք, կարծես թե իրականություն է դարձել, ինչի ապացույցն այժմ Երեւանի փոստային բաժանմունքներում ՀԴՄ կտրոններով շահումներ ստացողների չափազանց սակավաթիվ լինելն է:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի եւ «Հայփոստ» ընկերության որոշ աշխատակիցներ վերոնշյալ իրողությունը փորձում են բացատրել այն հանգամանքով, որ հունվարին վճարվել են միանգամից երեք ամսվա կտրոններով կայացած շահումները, իսկ այժմ վճարվում են միայն հունվարի կտրոններով շահումները: Այո, այդպես է, սակայն դա ներկա իրողության ամբողջական բացատրությունը չէ, քանի որ այդ դեպքում «Հայփոստի» բաժանմունքներում պարզապես պետք է տեսնեինք հերթի կանգնած երեք կամ, թեկուզ, վեց անգամ ավելի քիչ (հաշվի առնելով նաեւ հունվարի առաջին տասնօրյակում գնումների սակավաթիվ լինելը) մարդկանց, սակայն ՀԴՄ կտրոններով շահումներ ստացողների հերթեր ընդհանրապես չկան:

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԽՈՀԱՆՈՑ

Մինչ թուրքերի հայտնվելը տոլմա չէիմք ուտում

Մեծարգո խմբագիր,

«Ազգ» օրաթերթի 2011 թվականի փետրվարի 24-ի համարում տպագրվել է թերթի թղթակից Ինգա Պետրոսյանի հարցազրույցը «Հայ խոհարարական ավանդույթների զարգացման եւ պահպանման» ՀԿ նախագահ, ճանաչված խոհարար Սեդրակ Մամուլյանի հետ:

Հարցազրույցի վերջում զարմանքով տեսանք խմբագրության հավելումը, թե խմբագրությունը համաձայն չէ խոհարարի հետ տոլմա բառի ծագումնաբանության հարցում եւ տոլմա ճաշատեսակը հայկական չէ, անվանումն էլ թուրքերեն է:

Ինչպես նշել է պրն Մամուլյանն իր հարցազրույցում, մեր կազմակերպությունն արդեն երկար տարիներ զբաղվում է հայկական ավանդական ուտեստների վերհանմամբ ու մասսայականացմամբ եւ այդ առումով մենք բանահավաքչություն ենք կազմակերպում ՀՀ մարզերում, Արցախում, Ջավախքում: Անգամ ՀՀ սփյուռքի նախարարության աջակցությամբ բանահավաքական աշխատանքներ ենք իրականացնում հայկական գաղթօջախներում: Մեր աշխատանքներում ներգրավված են ոչ միայն խոհարարներ, այլեւ պատմաբաններ, ազգագրագետներ: Եվ մենք խմբագրության արած հավելումը համարում ենք ոչ մասնագիտական, կամայական մոտեցում խնդրին, որն անթույլատրելի է:

Նախ տոլմա բառն առաջացել է ուրարտերեն ուդուլի բառից, որը նշանակում է խաղողի վազ: Այդտեղից էլ առաջացել է տոլին՝ խաղողածին: Անգամ որոշ մասնագետների պնդմամբ, Անատոլիա բառը թարգմանաբար նշանակում է խաղողի հայրենիք, այլ ոչ հունարեն արեւելք...

Ինչեւէ. եթե ընդունելու լինենք տոլմայի թուրքական ծագումը, նշանակում է, որ մեր նախնիները մինչ թուրքերի՝ այդ տարածաշրջանում հայտնվելը տոլմա չեն օգտագործել, կամ, ծայրահեղ դեպքում խոհանոցը համարվում է մեր ոչ նյութական մշակութային արժեքների կարեւորագույն, բաղկացուցիչ մասը, եւ նման կերպ վերաբերվել հարցին՝ կարծում եմ, անթույլատրելի է: Մինչեւ ե՞րբ մենք պիտի կամովին հրաժարվենք մեր արժեքներից: Էլ ինչո՞ւ ենք մեղադրում թուրքերին եւ մեր մյուս հարեւաններին պատմական կեղծարարության մեջ, երբ մենք ինքներս ենք տեղիք տալիս մեր գործելաոճով նման կեղծարարությանը:

Անկեղծ հարգանքով՝

ՎԱՀԵ ԱՆԹԱՆԵՍՅԱՆ
«Հայ խոհարարական ավանդույթների զարգացման եւ պահպանման ՀԿ խորհրդի քարտուղար

Խմբագրության կողմից.- **Մի խեղաթյուրեմ մեր խոսքերը. որն խոհարարպես. մենք չենք ասել, որ տոլմա ճաշատեսակը հայկական չէ, այլ՝ միջերկրականյան, ելնելով այն հանգամանքից, որ այդ եւ հարակից երկրներում, այդ թվում Կիլիկիայում եւ Հայաստանում, տոլմայի տարատեսակները տարածված են եղել եւ են: Ինչ վերաբերում է «տոլմա» անվանը, իրոք թուրքերեն է, եւ ճաշատեսակը հենց այդ անվամբ ծանոթ է Անատոլիայի, Պոնտոսի, Կիպրոսի եւ Հունաստանի տարածքներում նաեւ: Ճաշատեսակն այդ անունով ծանոթ չէ միայն Սիրիայում եւ Լիբանանում, որտեղ «տոլմայի» փոխարեն օգտագործվում է արաբերեն «մեհշի» բառը, որը նշանակում է լիցք, լցոնված, մինչ հայաստանյան հասկացությամբ թփով տոլմային դարձյալ ասում են «ուարաղ անաբ», այսինքն՝ «խաղողի տերեւ»: Պետք է հիշել նաեւ, որ թփով կամ կաղամբով փաթաթված ճաշատեսակին Արեւելյան Հայաստանում նույնպես տոլմա են ասում, այնինչ նախկին օսմանյան երկրներում այն անվանվում է «սարմա», որը թուրքերեն է եւ նշանակում է փաթաթված, փաթույթ:**

Ազգային սնապարծությունն այստեղ տեղ չպետք է ունենա: Մանավանդ որ ոչ ոք չի կարող բացառել, որ «տոլմա» եւ «սարմա» բառերը կարող էին հայերն առաջինն օգտագործած լինել, ինչպես թուրքերեն շատ այլ բառեր եւ արտահայտություններ: Խոհարար-ուսումնասիրողներիդ է մնում տոլմայի տարատեսակներից որոշել մեզ համար ամենահարազատը եւ անունը դնել «հայկական տոլմա»:

ԱԶԳ

Միջազգային

Փետրվարի 28-ին որոշ միջազգային լրատվամիջոցների տեղեկացմամբ՝ Լիբիայի առաջնորդ Մուամմար Քադդաֆիի ինֆնաթիռը վայրէջք է կատարել Բելառուսի մայրաքաղաք Մինսկում: Որեւէ աղբյուր չի նշում՝ Քադդաֆին եղե՞լ է ինֆնաթիռում, թե՝ ոչ. միայն արվում են որոշ ենթադրություններ, որ Լիբիայի «առաջին ինֆնաթիռը» «եղբայր Լուկաշենկոյի» մոտ է տեղափոխել Քադաֆիի ընտանիքին: Ավելորդ չենք համարում հիշեցնել, որ օրեր տուղարի (նախարարի) քաղաքական հարցերով տեղակալ Սեդ Մուսթաֆա Մուջբիրի գլխավորած ներկայացուցչական պատվիրակության ընդունելության ժամանակ ասել է, որ հիացած է իր բարեկամ եւ եղբայր Քադդաֆիի՝ Աֆրիկյան միություն ստեղծելու ջանքերով, որը պետք է միավորի 700 մլն մահմեդականների»: «Ազադլիգը» եզրակացնում է, որ փաստորեն այդ տարիներին Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելը միակը չէր, որ Հեյդար Ալիեւի «եղբայրն ու բարեկամն էր»: Դե, իսկ որ Իլհամ Ալիեւը հոր ժառանգորդն է, այդ թվում՝ քաղաքական հարցերով, մենք գիտենք առանց «Ազադլիգի» եզրակացության: Ի դեպ, ադրբեջանական պարբերականը հեգնանքով նկատել է. «Թերեւս միայն ժամանակի բացակայության պատճառով Բաքվում չկանգնեցվեց Քադդաֆիի արձանը, ինչպես մինչեւ այսօր կանգուն է մեկ այլ բռնապետ Հոսնի Մուբարաքի արձանը»: Հենց Բաքվում Եգիպտոսի նախկին նախագահի արձանի հիշատակմամբ էլ սկսել է իր՝«արաբական հեղափոխությունների ալիքի» մասին հրապարակումը ամերիկյան The Newsweek հանդեսը. «30 տարի շարունակ երկիրը երկաթե բռունցքով ղեկավարած, 17 օրվա ժողովրդական դիմակայությունից հետո վերջապես իշխանությունից հեռացած Հոսնի Մուբարաքը բազմել է Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվում», գրում է ամերիկյան հանդեսը: Այնուհետեւ, ընդգծելով, որ ամենայն հավանականությամբ Թունիսում, Եգիպտոսում եւ Լիբիայում տեղի ունեցող իրադարձությունները 1990-ականներին Արեւելյան Եվրոպայի ժողովրդական շարժումների կրկնությունն են, The Newsweek-ը գրում է. «Շատ մեծ է հավանականությունը, որ Մերձավոր Արեւելքում եւ Հյուսիսային Աֆրիկայում բռնկված ապստամբության ալիքը չի սահմանափակվի միայն այդ աշխարհագրությամբ: Նույնիսկ արեւմտյան փորձագետներն ու պաշտոնատար անձինք են հայտարարում, որ իշխանափոխությանն ուղղված գործողություններ կիրականացվեն Ադրբեջանից մինչեւ Զիմբաբվե ընկած տարածքում: Եվրոպայի որոշ առաջնորդներ, հենվելով անվտանգության, կայունության եւ էներգետիկ ռեսուրսների վրա, կարծում են, թե իրենց իշխանությունը շարունակական է լինելու: Սակայն նրանք պետք է եզրակացություններ անեն Թունիսում, Եգիպտոսում, Լիբիայում եւ այլ երկրներում տեղի ունեցող իրադարձություններից: Իշխանությունը բռնությամբ պահելը միայն ավելի շատ զայրույթ եւ ագրեսիա է ստեղծում կառավարության դեմ»:

Թերեւս մնում է «մեծ վերապահումով» համաձայնել ամերիկյան հանդեսի եւ որոշ համապատասխան փորձագիտական կարծիքներին, թե արաբական հեղափոխությունը կհասնի նաեւ Ադրբեջան. չէ՞ որ այդ երկիրը ամենաբարձր մակարդակով, պայքար է սկսել կոռուպցիայի դեմ:

Հ. ԱՓՅԱՆ

Մինսկի համալսարանի երկու պատվավոր դոկտորները

առաջ Բելառուսի նախագահը Մինսկ հրավիրեց Լիբիայի առաջնորդին. սա այն դեպքում, երբ Քադաֆիի մուտքը, ինչպես, ի դեպ, Լուկաշենկոյի, Եվրամիության երկրներ արգելված է: Հետաքրքրական է, որ ադրբեջանական «Ազադլիգը» Լուկաշենկո-Քադդաֆի զույգին ավելացնում է նաեւ Իլհամ Ալիեւին, քանի որ վերջինիս... Լուկաշենկոն անձամբ շնորհել է Մինսկի համալսարանի պատվավոր դոկտորի կոչում: Վերոհիշյալ կոչումը երկրների ղեկավարներից, բացի Ալիեւից, ունի միայն Քադդաֆին: Ավելին՝ ադրբեջանա-լիբիական «եղբայրական» կապերի մասին վկայում է նույն «Ազադլիգի» հաղվածը պաշտոնական «Ազարբայջան» թերթի 2000-ի նոյեմբերի 21-ի համարից, որտեղ մասնավորապես գրված է. «Ադրբեջանի հանրապետության նախագահ Հեյդար Ալիեւը 2000-ի նոյեմբերի 20-ին Լիբիայի բարձրագույն ժողովրդական կոմիտեի՝ արտասահմանյան կապերի եւ միջազգային համագործակցության քարտուղարի (նախարարի) քաղաքական հարցերով տեղակալ Սեդ Մուսթաֆա Մուջբիրի գլխավորած ներկայացուցչական պատվիրակության ընդունելության ժամանակ ասել է, որ հիացած է իր բարեկամ եւ եղբայր Քադդաֆիի՝ Աֆրիկյան միություն ստեղծելու ջանքերով, որը պետք է միավորի 700 մլն մահմեդականների»: «Ազադլիգը» եզրակացնում է, որ փաստորեն այդ տարիներին Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելը միակը չէր, որ Հեյդար Ալիեւի «եղբայրն ու բարեկամն էր»: Դե, իսկ որ Իլհամ Ալիեւը հոր ժառանգորդն է, այդ թվում՝ քաղաքական հարցերով, մենք գիտենք առանց «Ազադլիգի» եզրակացության: Ի դեպ, ադրբեջանական պարբերականը հեգնանքով նկատել է. «Թերեւս միայն ժամանակի բացակայության պատճառով Բաքվում չկանգնեցվեց Քադդաֆիի արձանը, ինչպես մինչեւ այսօր կանգուն է մեկ այլ բռնապետ Հոսնի Մուբարաքի արձանը»: Հենց Բաքվում Եգիպտոսի նախկին նախագահի արձանի հիշատակմամբ էլ սկսել է իր՝«արաբական հեղափոխությունների ալիքի» մասին հրապարակումը ամերիկյան The Newsweek հանդեսը. «30 տարի շարունակ երկիրը երկաթե բռունցքով ղեկավարած, 17 օրվա ժողովրդական դիմակայությունից հետո վերջապես իշխանությունից հեռացած Հոսնի Մուբարաքը բազմել է Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվում», գրում է ամերիկյան հանդեսը: Այնուհետեւ, ընդգծելով, որ ամենայն հավանա-

Քադդաֆիի հաշիվները սառեցվել են ԱՄՆ-ում եւ Մեծ Բրիտանիայում

Միջազգային դատարանը քննում է նրա գործերը

Արեւմուտքը սկսել է պատժամիջոցներ կիրառել Լիբիայի բռնապետ Մուամմար Քադդաֆիի դեմ: Երեկ «Ազգը» գրեց, որ Եվրամիությունը որոշել է սառեցնել նրա ակտիվները եւ արգելել մուտքը ԵՄ տարածք: Նախօրեին ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը ընդունել էր բանաձեւ, որով արգելվում են Քադդաֆիի ելքը Լիբիայից եւ զենքի վաճառքը այդ երկրին:

Վաշինգտոնում եւ Լոնդոնում արդեն իսկ գործնական քայլեր են ձեռնարկվում: Մասնավորապես ամերիկյան բանկերը սառեցրել են Լիբիայի ակտիվները, որոնց գումարը մոտ 30 մլրդ դոլար է: ԱՄՆ ֆինանսների նախարար Դեյվիդ Քոենը «Ֆայնենշլ թայմս» թերթի թղթակցին ասել է, որ դա ամերիկյան բանկերում երբեւիցե սառեցված խոշորագույն գումարն է: Լոնդոնը իր հերթին սառեցրել է Քադդաֆիի եւ նրա ընտանիքի հինգ անդամների ակտիվները, որոնց գումարը բրիտանական բանկերում մոտ 1,6 մլրդ դոլար է:

Հաղորդվում է նաեւ, որ Միջազգային քրեական դատարանը սկսել է Լիբիայի վարչակարգի հնարավոր պատերազմական հանցագործությունների նախաքննություն: Սացվելիք տվյալների հիման վրա կլուծվի տվյալ գործով ծավալուն քննություն հարուցելու հարցը: Այդ մասին հայտարարել է դատարանի գլխավոր դատախազ Լուիս Մորենո-Օկամպոն:

Նրա խոսքերով, Միջազգային դատարանը կապեր է պահպանում լիբիացի պատասխանատուների եւ զինվորականների հետ, որպեսզի պարզի կառավարման կառուցվածքը եւ հասկանա, թե ովքեր են պատասխանատու հրամանների համար: Գլխավոր դատախազն ասել է, որ հարկավոր է վերջ դնել խաղաղ բնակիչների վրա Քադդաֆիի զորքերի հարձակումներին:

«Կարսի հուշարձանը քանդում են Ադրբեջանի նախագահի խնդրանքով»

1-ին էջից

Հուշարձանի կառուցումը սկսվել էր դեռեւս 2006-ին, այսինքն՝ նախորդ քաղաքապետի՝ Նաիֆ Ալիբեյոլլուի օրոք: 2008-ին կառուցումը կասեցվեց, 2010-ին որոշվեց քանդել, 2011-ին՝ Կարսի քաղաքային խորհուրդը հաստատեց որոշումը: Հուշարձանը քանդելու որոշումը լայն արձագանք գտավ ինչպես Թուրքիայում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Դրան թուրքական կենտրոնական թերթերի հետ արձագանքեց նաեւ ամերիկյան եւ եվրոպական մամուլը: Արձագանքներում այդ որոշումը պայմանավորվեց վարչապետ Էրդողանի հետ, որը հուշարձանը որակել էր «ավելի քան անճոռնի»:

Որքանո՞վ է դա համապատասխանում իրականությանը: Այդ հարցին «Մարմարա» համալսարանի ուսանողների հետ հանդիպմանը, ինչպես փետրվարի 28-ին նշել է «euractiv.com» կայքը, պատասխանել է Կարսի նախկին քաղաքապետ Ալիբեյոլլուն: Նա «ինչպես ծագեց հուշարձան կառուցելու միտքը» հարցին ի պատասխան, ասել է. «Ըստ առասպելի, մարդկությունը երկրագնդի վրա տարածվել է աշխարհագրական այս վայրից: Մենք էլ որոշեցինք միեւնույն աշխարհագրությունից աշխարհին մարդասիրական ուղերձ հղել: Մտադիր էինք «մարդասիրության» հուշարձանով հակակշռել Հայաստանում, Լիոնում, Փարիզում եւ այլուր տեղակայված ցեղասպանության զոհերի հուշարձանները, որովհետեւ այդ հուշարձաններն այցելող յուրաքանչյուր հայ դառնում է թուրքի թշնամին: Այդ կարգի հուշարձանները ժողովուրդների միջեւ ատելություն են սերմանում: Ելնելով այս ամենից, ինչպես նաեւ հաշվի առնելով պատերազմների պատճառած վիշտը, ի վերջո մենք այս վայրերում 90 հազար զոհ ենք տվել եւ 40 տարի կրել ենք օտարերկրյա տիրապետություն Կարսը ռուսներին հանձնելու պատճառով, առաջարկեցի հուշարձան կառուցել քաղաքի մուտքի մոտ: Ցանկանում էի, որ քաղաքը խաղաղության կղզի դառնա Կովկասում: Այդ նպատակով եղա Գյումրիում, հանդիպեցի քաղաքապետի հետ, ասացի, որ լավ կամ վատ ժողովուրդներ չեն լինում, իսկ թշնամությունը չի կարող հավերժ լինել»:

«Ինչն է խորհրդանշում է արձանը» հարցի առնչությամբ Ալիբեյոլլուն նշել է. «Այդ արձանը պատկերում է կիսված մարդու մարմինը: Իրականում խոսքը մեկ մարդու մասին է: Մեկը նրան ձեռք է մեկնում, իսկ մյուսը՝ քաշում է, այսինքն՝ մեկը բարության, մյուսը՝ չարիքի խորհրդանիշն է»:

Այնուհետեւ նա անդրադառնում է հուշարձանը քանդելու որոշմանը, ընդգծում է, որ այդ որոշումը որեւէ առնչություն չունի պատմական, գեղեցկանի կամ այլ պատճառաբանություններին, բուն պատճառը ինքը չի կարող բացատրել, ապա եւ ավելացնում՝ «Հուշարձանը քանդում են մեկի խնդրանքով: Այդ մեկը հենց Ադրբեջանի նախագահն է (Իլհամ Ալիեւ): Մենք կախում ունենք ադրբեջանական նավթից եւ գազից: Դա է գլխավոր պատճառը: Չենք կարողանում նախապատարմունքները հաղթահարել: Դեռ հուշարձանի կառուցումը չավարտված, արձակեցին դրա մահվան դատավճիռը: Աստվածները զոհ էին պահանջում, ուստի եւ անխուսափելի դարձավ քանդման համար պատճառաբանությունների որոնումը»:

ՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԵՐԻ ՀԱՄԱՐ

Մոսկվայի քաղաքապետ. «Առաջին հերթին աշխատանք տալ ռուսաստանցիներին»

Երեկ տեղի ունեցած Մոսկվայի կառավարության նիստում քաղաքապետ Սերգեյ Սոբյանինը հայտարարել է, որ առաջին հերթին պետք է աշխատանք տալ մոսկվացիներին, ՌԴ քաղաքացիներին, նոր միայն օտարերկրացիներին: Սոբյանինը իր դիրքորոշումը հիմնավորել է այսպես. «Միգրանտները Մոսկվայում անլեգալ փողեր են աշխատում, բացի դրանից՝ անօրինական միգրացիան մեծացնում է հանցագործությունների տոկոսը Մոսկվայում»: Անշուշտ, ճշմարտություն կա քաղաքապետի խոսքերում, որ անօրինական միգրացիան մեծացնում է հանցագործությունների թիվը, որը միգրանտները կոնկրետ Մոսկվայում անօրինական փողեր են աշխատում, սակայն, որ Ռուսաստանի մայրաքաղաքում այսօր օրինական միգրանտներն ավելի շատ են, քան այն մոսկվացիները, որոնք կհամաձայնեն անել այն աշխատանքը, ինչով զբաղված են միգրանտները: Օրինակ, ինչպե՞ս է պատկերացնում Մոսկվայի քաղաքապետը այն քաղաքային շուկայի տիրոջ վիճակը, որը բեռնակիր աշխատելու համար, հավատարիմ Սոբյանինի պահանջին, չի ընդունում բոլոր նրանց, ովքեր մոսկվացի չեն: Մոսկվայում մշտական գրանցում ունեցողը, թեկուզ այլազգին, այլեւս չի համաձայնի զբաղվել այնպիսի «ոչ պատվաբեր» աշխատանքով, ինչպիսին բեռնակրի աշխատանքն է: Այնպես որ քաղաքապետ Սոբյանինը պետք է հասկացներ. «Լավ վարձատրվող, քաղաքացիներում, հարմարավետ,... աշխատանք տալ նախ եւ առաջ մոսկվացիներին»: Դե, իսկ մնացած աշխատանքները Ռուսաստանի մայրաքաղաքում, ինչպես միշտ, պատրաստ են անել բացառապես միգրանտները:

Հ. Ա.

Ռուսաստանում միլիցիային փոխարինեց ոստիկանությունը

Մարտի 1-ից Ռուսաստանի միլիցիան պաշտոնապես դադարեցրեց գոյությունը եւ փոխարինվեց ոստիկանությամբ: Այս կապակցությամբ BBC-ն հաղորդում է որոշ մանրամասնություններ:

Ոստիկանության մասին ընդունված օրենքը Ռուսաստանի պատմության մեջ առաջին անգամ կարգուկանոնի պահապանին պարտավորեցնում է կալանավորվածին պարզաբանել իրավաբանական օգնություն, թարգմանչի ծառայություններ ստանալու, կալանավորման մասին մերձավորներին հայտնելու իրավունքները, ինչպես նաեւ ցուցմունքներ տալուց հրաժարվելու իրավունքը:

Կալանավորված անձը ունի մեկ հեռախոսազանգի իրավունք (հարազատին կամ մերձավորին): Այս դրույթը չի տարածվում արդարադատությունից թաքնվողների կամ կալանավայրից փախածների վրա:

Նոր օրենքն արգելում է խոշտանգումները, դաժան կամ նվաստացնող վերաբերմունքը: Ոստիկանությունն իրավունք չունի հատուկ միջոցներ, այդ թվում՝ մահակներ կիրառել խաղաղ ցույցերի ու հանրահավաքների (նաեւ չարտոնված) մասնակիցների դեմ: Բացառություն են կազմում զանգվածային անկարգությունները եւ այն գործողությունները, որոնք խախտում են տրանսպորտի երթեւեկությունը, կամի աշխատանքը, կազմակերպությունների գործունեությունը:

Ռուսաստանցի միլիցիոներները դառնում են ոստիկաններ: Իսկ թե իրականում ինչ կփոխվի, առայժմ ոչ ոքի հայտնի չէ:

Սաուդցիները 30 տանկ են ուղարկել Բահրեյն

Սաուդյան Արաբիան 25 կիլոմետրանոց «Ֆահդ թագավորի ամբարտակի» վրայով 30 տանկ է ուղարկել կղզի-պետություն Բահրեյն: Ակնատեսներին վկայակոչելով՝ այդ մասին հաղորդում է եգիպտական «Ալ Մասրի ալ Յոում» թերթը: Ամբարտակի վրա մարդատար ավտոմեքենաները որոշ ժամանակ կանգ են առել, որպեսզի ճանապարհը զիջեն երկուական տանկ տանող 15 քարշամեքենաներին:

Թերթը նշում է, որ Բահրեյնում սաուդյան ռազմական տեխնիկայի առկայությունը բացառիկ դեպք է:

Բահրեյնում մեծամասնություն կազմող շիաները վերջին օրերին բողոքի բազմամարդ ցույցեր են անում՝ դժգոհելով սունիի միապետի եւ նրա մերձավորների կառավարումից, պահանջելով բարեփոխումներ եւ վարչապետի ընտրովիություն:

Վահան Մարտիրոսյանը՝ Կամերային նվագախմբի գլխավոր դիրիժոր եւ գեղարվեստական ղեկավար

Օրերս Հայաստանի կամերային նվագախմբի գլխավոր դիրիժոր եւ գեղարվեստական ղեկավար է նշանակվել տաղանդավոր դաշնակահար Վահան Մարտիրոսյանը: Սորեւ թարգմանաբար՝ որոշ կենսագրական մանրամասնություններ:

Վահան Մարտիրոսյանը ծնվել է Երեւանում, բայց 1993-ից բնակվում է Ֆրանսիայում, որտեղ սովորել եւ հաջողությամբ ավարտել է Փարիզի երաժշտանոցը, արժանանալով դաշնամուրի առաջին կարգի եւ կամերային երաժշտության մրցանակների, ինչպես նաեւ հիմնարկության բարձրագույն դիպլոմին:

Որպես դաշնակահար նա բազմիցս հրավիրվել է նվագակցելու Ֆրանսիայի ազգային նվագախմբի, Փարիզի նվագախմբի, Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի, Պորտուգալիայի սիմֆոնիկ, Կաննի եւ այլ նվագախմբերի հետ, որպես դիրիժորներ ունենալով Մասուրին, Ժարվիին, Ահարոնովիչին, Սադոյին, Բենդերին եւ Սանդերլինգին: Համերգներ է տվել Եվրոպայում, Ասիայում եւ Ամերիկայում:

Մարտիրոսյանը համագործակցել է կոմպոզիտորներ Էրիկ Թանգուիի Մատիսլավ Ռոստրոպովիչի եւ Պենդերեցկիի հետ: Թանգուին դաշնամուրի իր երկրորդ սոնատը նվիրել է Վահանին:

Մարտիրոսյանի մենանվագային ձայնագրություններում կարելի է գտնել Բախի, Հենդելի, Շուբերտի, Բրամսի, Լիստի եւ Ջավարոյի ստեղծագործությունները: Նրա կատարումները բարձր են գնահատել Եվրոպայի եւ Ամերիկայի քննադատները: Նրա վերջին խտասալիկներից մեկը՝ «Արմենիան», որն ամբողջովին նվիրված է հայկական դասական երաժշտությանը, որում տեղ են գտել նաեւ իր ուրույն կոմպոզիցիաները, արժանացել է «Երաժշտության աշխարհը» ամսագրի սահմանած Choc-2007 մրցանակին: Տաղանդավոր դաշնակահար լինելուն զուգահեռ նա նաեւ հիանալի դիրիժոր է: 15 տարեկանում նշանակվել է Հայաստանի երիտասարդական կամերային նվագախմբի գլխավոր դիրիժոր եւ գեղարվեստական ղեկավար: Իսկ վերջերս Քուրս Մասուրը նրան հրավիրել է Նյու Յորք՝ ղեկավարելու «Մանհեթենի դպրոցական նվագախումբը»:

2010 թվականի սեպտեմբերից Վահան Մարտիրոսյանը վարում է Կաննի քաղաքի սիմֆոնիկ նվագախմբի դիրիժորի պաշտոնը:

Հ. Ծ.

Գայանեն՝ շրջապատված ավտոմատներով

Կապտակե՞ր արդյոք Խաչատրյանը

Չգիտեմ Արամ Խաչատրյանը երբեւէ կպատկերացներ, որ իր անմահական «Գայանե» բալետի «Սուսերով պարը» այուիտը կպարեն չադրա հագած աղջիկներ՝ սուսերի փոխարեն իրենց ձեռքերում պահելով Կալաշնիկովի ավտոմատները: Կարծում եմ, մեծ կոմպոզիտորի երեւակայությունը դժվար նման պոռթկում ունենար: Մինչդեռ չեխական Ուստի Նադ Լաբեմ քաղաքի օպերային թատրոնի գլխավոր բալետմեյստեր եւ ռեժիսոր Վլադիմիր Նեչասը ոչ միայն գրել է բալետի նոր լիբրետո, այլեւ իբրեւ հիմք վերցրել Պուշկինի «Կովկասի գերին» հայտնի պոեմը, որն էլ մեր օրերին համահունչ ադապտացրել է: Պարզվում է մոտ երկու դար առաջ՝ 1822 թվականին գրված պոեմն ավելի ընկալելի կարող է լինել այսօրվա չեխ հանդիսատեսին, քան 1942 թվականին Պերմում գրված բալետի լիբրետոն, որն, իհարկե, եւս մեկ անգամ գրվել է 1957-ին, երբ «Գայանեն» բեմականացվեց Մոսկվայի Մեծ թատրոնում:

Փետրվարի 25-ին եւ 27-ին Չեխիայում ներկայացված «Գայանե» բալետի առաջնախաղերում գլխավոր հերոսուհին՝ Գայանեն այլեւս ոչ թե մարմնավորում է հայուհու, այլ մահմեդական կնոջ, ով սիրահարվում է կովկասցի գերիզինվորին՝ այս դեպքում վրացուն, ազատում է նրան ու իր հետ փախչում վրացական գյուղ՝ հետապնդվելով ոչ միայն իր փեսացու Ռուսամբեկի, այլեւ գյուղի մոլլայի կողմից: Վերջինս նույնպես փորձում է Գայանեին սիրահետել: Վերջաբանը ողբերգական է, քանի որ Գայանեին ու զինվորին գտնում են, հերոսներից մեկը մյուսին սպանում է եւ սիրո պատմությունը ավարտվում է արյունահեղությամբ: Հոր կրակոցից մահանում է նաեւ Գայանեն: Հայկական գյուղի Արմենին, Մացակին ու Գիքոյին այսպիսով փոխարինում են մոլլան, Ռուսամբեկն ու զինվոր-գերին: Արեւելյան կոլորիտը լրացնում են նաեւ ժամանակ առ ժամանակ կատարվող մահմեդական աղոթքի՝ նամազի տեսարանները: Ռեժիսոր Նեչասը չի ցանկանում որեւէ կոնկրետ ազգային նմանություն անցկացնել, եւ մեզ հետ զրույցում հավաստիացնում է, թե կերպարներում կարող ենք տեսնել եւ վրացաբխազական, եւ վրաց-օսական, կամ այլ հակամարտությունների դրվագներ, սակայն ներկայացման նախաբանում պատասխանի վրա ցուցադրվող արխիվային հեռուստակադրերը ռուս-չեչենական եւ վրաց-օսական պատերազմներից, ցույց են տալիս Հյուսիսային Կովկասի վերջին տարիների արյունահեղությունները:

Ռեժիսորը մեզ հետ զրույցում իր այս ընտրությունը մեկնաբանում է այլեւս հնացած նախկին լիբրետոյով: «Մեզանում արդեն ոչ մեկի համար հետաքրքիր չէր լինի կոլխոզային սովետական մարդկանց պատմությունը: Ընտրեցի ժամանակակից թեմա, որը կհետաքրքրի հանդիսատեսին եւ կներկայացնի Կովկասի այսօրվա իրավիճակը՝ լի պատերազմներով ու հակամարտություններով»,- ասում է նա: Ըստ ռեժիսորի առաջ է մղվում ոչ թե քաղաքականությունը, այլ մարդկային սերը, որի համար հերոսները պատրաստ են զոհաբերել իրենց կյանքը: Եվ իհարկե, այս ամենում ամենագլխավորը Խաչատրյանի երաժշտությունն է, որի ուժը խոսքերով նույնիսկ չեմ կարող նկարագրել»: Մանկուց Խաչատրյանին ունկնդրող, Պրահայի օպերային բալետի հայտնի պարողը, որ պարել է նաեւ Խաչատրյանի «Սպարտակում», 6 տարվա մշածումներից հետո, որոշել է վերակենդանացնել Խաչատրյանի «Գայանեն», նրա համար գրելով նոր լիբրետո, ինչպես նշեցինք՝ իբրեւ հիմք վերցնելով Պուշկինի պոեմը:

«Իսկ ինչո՞ւ սրերի փոխարեն ընտրվեց Կալաշնիկով ավտոմատը» հարցն անսպասելի չէր ռեժիսորի համար: Բայց դա էլ իր բացատրությունն ունի, երբ տեսնում ենք ներկայացման առաջին րոպեներին բեմի պատասառների վրա ցուցադրվող պատերազմի կադրերը, ուր գերիշխողը ավտոմատներն ու տանկերն են: Դահլիճում նստած մտովի պատկերացնում ես, որ եթե հնարավորություն լիներ, միգուցե բեմ մտնեին նաեւ տանկերն ու ինքնաթիռները: Ինքը՝ ռեժիսորը դա բացատրում է ժամանակակից մեկնաբանությամբ, եւ նույնիսկ Մոսկվայի կենտրոն հասնող իսլամական ահաբեկչությամբ, բայց իր բեմականացումը նա ահաբեկչության քարոզչություն չի համարում: Ըստ նրա, այն էթնիկական տարբերակումներից եւ մեծ քաղաքականությունից դուրս է:

Ուստի Նադ Լաբեմի տեղական մամուլն արդեն իսկ ինքնաբերաբար է մոտեցել ներկայացմանը, նույնիսկ թերթերից մեկում հանդիսատեսներից մեկը գրել էր, թե Խաչատրյանը գերեզմանում երեւի մի քանի անգամ շուռ կգա, երբ իմանա այս բեմականացման մասին: Սակայն ռեժիսոր Վլադիմիր Նեչասը պատասխանելով մեր նմանատիպ հարցին, ասաց. «Խաչատրյանի երաժշտությունն այնքան դրամատիզմ ունի իր մեջ եւ ֆանտազիաների այնքան հնարավորություն է տալիս, որ ես լիովին կարող էի ազատ ստեղծագործել: Իմ ուղղությունների եւ փոփոխությունների մասին շատ եմ մտածել՝ թե ի՞նչ կմտածեր պարոն Խաչատրյանը, եթե նա դահլիճում նստած լիներ: Ամեն դեպքում, ինձ թվում է նա կնայեր ներկայացումը եւ ինձ չէր ասելիք»: Իհարկե, Խաչատրյանը կարող է եւ չասելիք, բայց ի՞նչ կաներ Պուշկինը, որի պոեմն էլ պակաս չի տուժել: Այլեւս չենք անդրադառնում բեմական ձեւավորման հեղինակ Սանիսլավ Յուլլերի աշխատանքին, ով օգտագործել էր պատերազմական գույներն ու թեմատիկան, արեւելյան զարդանաշխերի փոխարեն պատկերելով խաչաձեւված ավտոմատներ եւ օդից կախված մարդկային կերպարանքով թիրախներ, որոնք մեղմ ասած չէին արտացոլում երաժշտության հաղորդած դրական էներգիան:

Ի դեպ, Գայանեի երկու դերակատարները՝ պարուհիներ ռուս Մարգարիտա Պլեշկովան եւ չեխուհի Միխայելա Պրոխազկովան, մոլլայի դերակատար ռուս Վլադիմիր Գոնչարովը մեզ հետ զրույցում հաստատեցին, որ ներկայացման մեջ շատ բան կարող է եւ իրենց դուր չգալ, բայց իրենք ավելի շատ ապրում են Խաչատրյանի հանճարեղ երաժշտությամբ եւ ուրախ են, որ թատրոնի պատերից ներս այսօր թեւածում է այդ հիասքանչ երաժշտությունը: Եւ երեւի նրանք ինչպես տեղ ճիշտ են, քանզի ռեժիսոր Նեչասն էլ նույն կարծիքին է: Դիրիժոր Միլան Կանյակի ղեկավարած նվագախումբը գերազանցեց մեր սպասելիքները՝ կատարումը հիանալի էր:

«Ես գիտեմ, թե հայերիդ համար ինչ ծանր է իսլամի հետ հարաբերությունները, հատկապես, որ պատմության ընթացքում տեսել ենք թուրքերի իրականացրած ցեղասպանությունը, ուստի, ես հայերին հեռու պահեցի այս պատմությունից: Իսկ Գայանեի անունը փոխել չէի կարող, քանի որ դա բալետային ստեղծագործության անունն էր»: Ռեժիսոր Նեչասի այս անկեղծ խոստովանությունից հետո միայն հասկանում ես, որ հայերն այս անգամ ուղղակի «փրկվել են», այլապես ավտոմատներով պարող աղջիկների տեղում կարող էին նաեւ հայուհիներ լինել:

Մեր զրույցների եւ տպավորությունների այլ մանրամասները՝ «Օրեր» եվրոպական ամսագրում:

ՀԱԿՈԲ ԱՄԱՏՈՒՆԻ
Պրահա



Քաղաքապետի նախաձեռնությամբ վերականգնվեց բարի ավանդույթը

Երեւանի քաղաքապետարանի ենթակայության հանրակրթական դպրոցների աշակերտների շրջանում թատրոններ եւ թանգարաններ հաճախելու ավանդույթի վերականգնման, ինչպես նաեւ կրթական հասատությունների ուսումնադաստիարակչական եւ ճանաչողական գործունեության ակտիվացման նպատակով ս.թ. մարտի 1-ից Երեւանի քաղաքապետ Կարեն Կարապետյանի նախաձեռնությամբ մեկնարկել է հանրակրթական դպրոցների աշակերտների թատրոններ եւ թանգարաններ անվճար այցելության աբոնեմենտներով ապահովելու ծրագիրը:

Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի կրթության եւ մշակույթի վարչությունների, մայրաքաղաքի թատրոնների տնօրենների եւ գեղարվեստական ղեկավարների համատեղ ջանքերով կազմվել է ինչպես ուսումնական ծրագրերի համապատասխան ներկայացումների խաղացանկը, այնպես էլ հասակ ժամանակացույց, որի համաձայն քաղաքապետարանի ենթակայության 161 դպրոցների ավելի քան 80 հազար 300 աշակերտ այս ուսումնական տարում (մարտի 1-ից մինչեւ մայիսի 15-ը ներառյալ) հնարավորություն կունենա այցելելու մայրաքաղաքի 9 թատրոններ: «Ծրագիրը ընդունվել է դեռեւս հունվարից: Բոլոր թատրոնների խաղացանկերը ներկայացվել են դպրոցներին եւ, ուսուցչական կոլեկտիվների եւ ծնողների համատեղ ընդունման արդյունքում ընտրվել են ներկայացումները: Յուրաքանչյուր թատրոնից ընտրվել է երեխական ներկայացում, եւ, կազմված ժամանակացույցի համաձայն, յուրաքանչյուր դպրոց մինչեւ ուսումնական տարեվերջ հնարավորություն ունի դիտելու նշված թատրոնների երեխական ներկայացում», ծրագրի մեկնարկի առիթով լրագրողների հետ հանդիպման ժամանակ նշել է Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի կրթության վարչության պետ **Գայանե Սողոմոնյանը:**

Ծրագրով նախատեսվում են նաեւ դպրոցականների անվճար այցելություններ Երեւան քաղաքի պատմության թանգարան եւ դպրոցականի ֆիլհարմոնիա, որտեղ աշակերտների համար ճանաչողական եւ խաղ-դասեր կկազմակերպվեն:

Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչություն

Հաղորդագրություն

Երեկ ժ.18.00-ին Երեւանի քաղաքապետարանի «Հայ-Արս» մշակութային կենտրոնում բացվեց հայկական որմնագորգերի (գոբելեն) մեծ ցուցահանդես՝ ներկայացնելով 30-ից ավելի հեղինակների շուրջ 70 աշխատանք:

«Գարնանամուտ» խորագրով այդ երեկոն ուղեկցվեց հայկական որմնագորգերի հրաշալի նմուշներով՝ զուգորդելով գարնան առաջին օրվա, զարթոնքի եւ շարունակվող կյանքի հետ:

Անդրադառնալով ցուցադրվող հայկական որմնագորգերին «Հայ-Արս» մշակութային կենտրոնի տնօրեն Ռիտա Շառոյանը ընդգծեց, որ նկարիչները գործել են իրենց իսկ հեղինակային էսքիզներով՝ միահյուսելով նկարչությունն ու գոբելենագործությունը, եւ ավելացրեց. որմնագորգի ազգային դպրոցի ձեւավորման պրոցեսն, անշուշտ, շարունակվում է մինչ օրս՝ (վկան այս ցուցահանդեսը) իր ստեղծագործական ամենաբարձր շեշտադրումն արձանագրելով անցյալ դարի 80-90-ական թթ.-ին:

Երեկոյին յուրօրինակ շունչ ու բովանդակություն հաղորդեց համերգային փոքրիկ ծրագիրը՝ մասնակցությամբ ՀՀ. Ժողովրդական արտիստ Անժելա Աթաբեկյանի եւ անվանի քանոնահարուհի Ծովինար Հովհաննիսյանի:

Այդ երեկոն անմոռաց հանդիպում էր գարնան, զարթոնքի, գույնի եւ երաժշտության հետ:

«Գարնան շնչով» - չորս նկարչի ցուցահանդես

Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանում շարունակվում է նկարիչներ Վլադիմիր Սիմոնյանի, Արտավիր Կիրակոսյանի (Արտոյի), Մամիկոն Գիքինյանի, Էդիկ Արեւշատյանի գեղանկարների ցուցահանդեսը: Ցուցահանդեսը կազմակերպվել է գարնանային ամենագեղեցիկ տոնին՝ կանանց միջազգային ընդառաջ: Ցուցահանդեսում ներկայացված են նկարիչների վերջին շրջանում արած աշխատանքները: Դրանցում կարելի է զգալ գարնան շունչը, սպասված տաք ու կրակոտ գույները, իսկ երբեմն էլ «սուր աչքով» հնարավոր է որսալ ֆիզիկայի եւ բնության օրենքների ակնհայտ հակասություններ: «Գարնան շնչով» խորագիրը կրող ցուցահանդեսը կգործի մինչեւ մարտի 7-ը: Կազմակերպիչներն են «ՓԻԱ»-ի զարգացման հայկական կենտրոնը եւ Թումանյան տուն-թանգարանը:

Արոնյանը բարելավեց իր ռեկորդային վարկանիշը

ՖԻԴԵ-ն հրապարակել է շախմատիստների դասակարգման հերթական ցուցակը: Այն 2817 վարկանիշով գլխավորում է աշխարհի ներկայիս չեմպիոն Վիշվանաթան Անանդը: Նա նախորդ ցուցակի համեմատ վարկանիշն ավելացրել է 7-ով, որի շնորհիվ շրջանցել է նախկին առաջատար Մագնուս Կառլսենին: Վերջինս վարկանիշն ավելացրել է 1-ով ու 2815 գործակցով ընթանում է 2-րդ տեղում:

Ցուցակում 3-րդ հորիզոնականում իր դիրքն է պահպանել Լևոն Արոնյանը՝ վարկանիշն ավելացնելով 3-ով: Այժմ նրա վարկանիշը 2808 է, ինչը ռեկորդային է Լևոնի համար: Հիշեցնենք, որ Արոնյանը 2800-ի սահմանագիծն առաջին անգամ հասել 2010-ի նոյեմբերին (2801): Հունվարի դասակարգման ցուցակում նրա վարկանիշը 2805 էր:

Աշխարհի 100 ուժեղագույն շախմատիստների թվում բացի Արոնյանից ընդգրկված են հայաստանցի եւս 3 շախմատիստներ: 29-րդ տեղում է Սերգեյ Մովսիսյանը (2716): Նա վարկանիշը նվազեցրել է 5-ով ու նահանջել 3 հորիզոնականով: Իսկ ահա Գաբրիել Սարգսյանը բարելավել է ցուցանիշը 9-ով (2676) եւ 75-րդ տեղից տեղափոխվել է 65-րդ հորիզոնական: Շարունակվում է նահանջը Վլադիմիր Հակոբյանի մոտ: Թեեւ նրա վարկանիշը (2675) անփոփոխ է մնացել, սակայն նախորդ ցուցակի համեմատ նա 63-րդ տեղից տեղափոխվել է 67-րդ հորիզոնական:

100 ուժեղագույնների թվում ընդգրկված է եւս մեկ հայ շախմատիստ՝ ֆրանսահայ Տիգրան Ղարամյանը: Նա վարկանիշը (2650) նվազեցրել է 8-ով եւ 88-րդ տեղից նահանջել է 98-րդ հորիզոնական:

Ամենամեծ առաջընթացը նկատվել է վիետնամցի շախմատիստ Լե Քուանգ Լիեմի մոտ, որը վերջերս հաղթող էր ճանաչվել «Աերոֆլոտի» մրցաշարի ուժեղագույնների խմբում: Նա վարկանիշը (2689) ավելացրել է 25-ով եւ 79-րդ տեղից տեղափոխվել է 44-րդ հորիզոնական: Ճապոնացի Հիկարու Նակամուրան էլ վարկանիշը (2774) ավելացրել է 23-ով ու 10-րդ տեղից բարձրացել է 8-րդ հորիզոնական: Իսկ ահա աշխարհի առաջնության հավակնորդների մրցաշարում Լեւոն Արոնյանի առաջիկա մրցակից Ալեքսանդր Գրիշչուկն ամենամեծ հեռընթացն է ունեցել: Նա վարկանիշը (2747) նվազեցրել է 26-ով եւ 7-րդ տեղից տեղափոխվել է 10-րդ հորիզոնական:

Կանանց դասակարգման ցուցակը շարունակում է գլխավորել Հուդիթ Պոլգարը (2686): Եվս 2 շախմատիստուհի՝ Համպի Կոներուն (2607) եւ Հոու Յիֆանը (2602) 2600-ից բարձր վարկանիշ ունեն: Իր համար ռեկորդային ցուցանիշի (2567) է հասել 4-րդ տեղում ընթացող Նանա Ջագնիձեն: Լավագույն հնգյակը նույնպիսի վարկանիշով եզրափակում է Նադեժդա Կոսինցեւան:

Էլինա Դանիելյանն ու Լիլիթ Մկրտչյանը միեւնույն՝ 2475 վարկանիշով զբաղեցնում են 25-րդ եւ 26-րդ տեղերը: Եթե Լիլիթը պահպանել է հունվար ամսվա վարկանիշը, ապա Էլինան այն ավելացրել է 21-ով: Անշուշտ, Գրան պրիի խաղարկությունում Էլինայի հաջող ելույթը կնպաստի նրա վարկանիշի հետագա աճին: 100 ուժեղագույնների թվում Հայաստանի 3-րդ ներկայացուցիչը Լիլիթ Գալոյանն է, որը 2377 վարկանիշով 84-րդ տեղում է: Նա վարկանիշը նվազեցրել է 8-ով եւ նահանջել 4 հորիզոնականով:

Առաջին անգամ մինչեւ 20 տարեկան շախմատիստների խաղադաշտում տեղ են զբաղեցրել Հայաստանի 2 ներկայացուցիչներ: 18-ամյա Սամվել Տեր-Սահակյանը 2575 վարկանիշով 16-րդ տեղում է, իսկ ցուցակը եզրափակում է Հայաստանի այս տարվա չեմպիոն, 20-ամյա Ռոբերտ Հովհաննիսյանը (2560): Դասակարգման ցուցակը 2716 վարկանիշով գլխավորում է իտալացի Ֆաբիանո Կարուանան:

ՖԻԴԵ-ն հրապարակում է նաեւ երկրների վարկանիշային ցուցակը՝ ելնելով տվյալ երկրի ամենաբարձր ցուցանիշ ունեցող 10 լավագույն շախմատիստների միջին վարկանիշից: Այս ցուցանիշով Հայաստանը 4-րդ տեղում է (2656): Առաջատարի դիրքը պահպանել է Ռուսաստանը (2732), որին հաջորդում են Ուկրաինան (2697) եւ Չինաստանը (2657): 5-10-րդ տեղերում են Ֆրանսիան (2650), Հնդկաստանը (2642), ԱՄՆ-ը (2641), Իսրայելը (2640), Ադրբեջանն (2636) ու Հունգարիան (2634):

Կանանց շախմատի արդյունքներով Հայաստանը բավական հեռ է՝ 23-րդ տեղում (2233): Առաջատարը կրկին ռուսներն են (2475), որոնց հաջորդում են լավագույն տասնյակում տեղ գրաված Չինաստանը (2462), Վրաստանը (2449), Ուկրաինան (2417), Հունգարիան (2412), Հնդկաստանը (2401), ԱՄՆ-ը (2347), Լեհաստանը (2340), Գերմանիան (2335) եւ Ֆրանսիան (2329):

Սարգիս Գրիգորյանը կշարունակի գլխավորել հանդբոլի ֆեդերացիան

Հայաստանի հանդբոլի ֆեդերացիայի համաժողովում կազմակերպության նախագահ է վերընտրվել ՀՀ վարչապետի վերահսկողության ծառայության պետ Սարգիս Գրիգորյանը: Նա հանդբոլի ֆեդերացիան ղեկավարում է 2003-ից: Իր հաշվետվությունում ֆեդերացիայի նախագահը նշել է, որ վերջին 2 տարում նախատեսված բոլոր միջոցառումներն իրականացվել են, անցկացվել են տարբեր տարիքային խմբերի Հայաստանի առաջնություններ:

Որոշակի հաջողություններ են արձանագրվել միջազգային ասպարեզում: Հայաստանի կանանց հավաքականը հաջող է հանդես եկել Իսրայելում անցկացված «Ջելենջ տրոֆի» մրցաշարում, իսկ տղամարդկանց ընտրանին Վանաձորում կայացած ՀՀ վարչապետի գավաթի խաղարկությունում գրավել է 2-րդ տեղը՝ հաղթելով Իրանի եւ Վրաստանի հավաքականներին:

Համաժողովում նաեւ նշվել է, որ ֆեդերացիայի ֆինանսական սուղ միջոցները չեն բավականացնում միջազգային մրցաշարերի մասնակցության համար:

Ֆեդերացիայի աշխատանքը գնահատվել է բավարար: Ընտրվել են նաեւ ֆեդերացիայի նախագահի տեղակալները՝ Հարություն Մելքոնյանն ու Արսեն Հակոբյանը: Ֆեդերացիայի գլխավոր քարտուղարի պարտականությունները կկատարի Աննա Մելքոնյանը:

Գոհարյանը մարզվում է «Իմպուլսում»

Բացառված չէ, որ Հայաստանի ազգային հավաքականի հարձակվող Հովհաննես Գոհարյանն այս տարի կրկին հանդես գա հանրապետության ֆուտբոլի առաջնությունում: Այս օրերին նա «Իմպուլսի» գլխավոր մարզիչ Արմեն Գյուլբուդաղյանցի հրավերով ժամանել է Երեւան ու մարզվում է թիմում:

Հիշեցնենք, որ անցյալ մրցաշրջանի կեսերից Գոհարյանը բելառուսական ԲԱՏԷ-ից վարձավճարով տեղափոխվել էր «Փյունիկ»: Առաջնության ավարտից հետո նա վերադարձավ ԲԱՏԷ, սակայն չկարողացավ ամրապնդվել թիմում: Վերջինս Գոհարյանին տրանսֆերի հանեց: Գոհարյանը ստիպված էր նոր թիմ փնտրել: Նա փորձաշրջան անցավ «Ուֆայում», ապա բանակցություններ վարեց «Տոմի» հետ: Սակայն ոչինչ չստացվեց: Դեռ լավ է, որ «Իմպուլսը» հայ ֆուտբոլիստին օգնության ձեռք մեկնեց:

Նոր համալրումներ «Շիրակում»

Գյումրիի «Շիրակը» պաշտոնապես համալրվեց եւս 2 ֆուտբոլիստով: Ակումբի հետ երկամյա պայմանագիր են կնքել Արսակ Օսեյանն ու Կարեն Ն. Խաչատրյանը: Արսակ Օսեյանը «Բանանցի» սան է, մի քանի մրցաշրջան հանդես է եկել հարազատ ակումբում: Այնուհետեւ նա տեղափոխվեց «Գանձասար»: Նա հանդես է եկել նաեւ մինչեւ 17 ու մինչեւ 19 տարեկանների Հայաստանի պատանեկան, ինչպես նաեւ երիտասարդական հավաքականներում:

Կարեն Ն. Խաչատրյանը ժամանակին խաղացել է Երեւանի «Արարատում», այնուհետեւ տեղափոխվել է «Կիլիկիա», որտեղ դրսեւորել է իր ռմբարկուի հատկանիշները՝ 3 մրցաշրջանում դառնալով 19 գոլի հեղինակ:

Դեսենֆլոսը հեռացավ «Փյունիկից»

Ֆրանսիացի պաշտպան Նիկոլաս Դեսենֆլոսը չարդարացրեց «Փյունիկի» մարզիչների սպասելիքները՝ թիմի կազմում փորձաշրջան անցնելով Թուրքիայում: Նա հեռացավ «Փյունիկից»: Իսկ ահա դարպասպահ Սերգեյ Բարսուկովը շարունակում է մարզվել Հայաստանի չեմպիոնի կազմում: Փյունիկցի Դավիթ Մանոյանը վիրահատությունից հետո Գերմանիայում շարունակում է ապաքինման գործընթացը:

ՖՈՒՏԲՈԼ

Անդրեասյանը մասնակցում է մարզչական դասընթացներին

Ինչպես հայտնի է, ըստ նոր կանոնակարգի, այս տարվանից ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության մասնակից թիմերը գլխավորող մարզիչները պետք է անպայման A կարգի մարզչական արտոնագիր ունենան, այլապես նրանց չի թույլատրվի զբաղեցնել գլխավոր մարզչի պաշտոնը:

Ներկայումս ֆուտբոլի ֆեդերացիայում սկսվել են A կարգի արտոնագրի դասընթացները, որոնք վարում են Արմեն Սանամյանը, Ալբերտ Սաֆարյանը, Սուրեն Չախալյանն ու Աշոտ Ավետիսյանը: Դասընթացներին մասնակցող մի խումբ երիտասարդ մարզիչների հետ պարապմունքների է հաճախում նաեւ մեր հանրապետության բանիմաց ու փորձառու մասնագետներից մեկը՝ Արկադի Անդրեասյանը, որը ներկայումս «Արարատի» փոխնախագահն է: Ինչպես եւ կանխատեսել էինք, 64-ամյա Արկադի Անդրեասյանը ստիպված է կրկին մարզչական աշխատանքով զբաղվել, քանի որ ներկայումս «Արարատը» մնացել է առանց գլխավոր մարզչի: Այս օրերին արարատցիները մարզվում են Էդգար Սաֆարյանի եւ դարպասապահների մարզիչ, «Արարատ-73-ի» անվանի դարպասապահ Ալյոշա Աբրահամյանի գլխավորությամբ, որոնց իր խորհուրդներով օգնում է Անդրեասյանը:

«Արարատի» հետ արդեն պայմանագիր է կնքել Արա Հակոբյանը, իսկ նրա եղբոր՝ Արամի հետ նմանատիպ գործարք տեղի կունենա մոտ օրերս: Թիմում փորձաշրջան է անցնում դարպասապահ Ալեքսանդր Պետուխովը:

Մկրտչյանն անդրանիկ հաղթանակը տոնեց

Դոհայում ընթացող շախմատի կանանց Գրան պրիի խաղարկության 7-րդ տուրում հայ շախմատասերներին իր արդյունավետ խաղով կրկին ուրախացրեց Էլինա Դանիելյանը՝ հերթական հաղթանակը տոնելով չինացի Չժու Չենի նկատմամբ: Դանիելյանը մրցակցի արքայի վրա այնպիսի հզոր գրոհ էր կազմակերպել, որ Չժու Չենը պատշտպանվելու այլ ելք չգտնելով, ստիպված էր 46-րդ քայլին հանձնվել: Հակառակ դեպքում Էլինան հաջորդ քայլին մատ կհայտարարեր: Այս հաղթանակից հետո Էլինա Դանիելյանն ավելի ամրապնդեց առաջատարի իր դիրքը՝ 7 հնարավորից վաստակելով 6,5 միավոր:

Տուրը հաջող էր նաեւ Լիլիթ Մկրտչյանի համար, որը վերջապես վայելեց հաղթանակի բերկրանքը: Նա սեւերով պարտության մատնեց չինացի Սյու Յուհուային, որին Էլինան հաղթել էր 5-րդ տուրում: Մկրտչյանը 3 միավորով Մարթա Ֆիեռոյի հետ բաժանում է 7-8-րդ տեղերը:

Դանիելյանի մոտակա հետապնդողների՝ Մարի Սեբագի ու Պիա Կրամլինգի մրցավեճն ավարտվեց սպիտակների հաղթանակով: Կրամլինգն անդրանիկ պարտությունը կրեց: Սեբագը 5 միավորով 2-րդ տեղում է: 4,5 միավոր վաստակեց Համպի Կոներուն՝ հաղթելով Բատույագ Մոնգոնտուլին: 4-ական միավոր ունեն Կրամլինգն ու Նանա Ջագնիձեն, որն առավելության հասավ Անտուանետա Ստեֆանովայի նկատմամբ: Մարթա Ֆիեռոն պարտվեց Մայա Չիբուրդանիձեին: Փաստորեն, 7-րդ տուրի բոլոր պարտիաներն արդյունավետ ավարտ ունեցան:

Այսօր կայանալիք 8-րդ տուրում Էլինա Դանիելյանը սեւերով կմրցի Համպի Կոներուի հետ: Լիլիթ Մկրտչյանը սեւերով կխաղա Նանա Ջագնիձեի հետ:

Քոթանջյանն առաջատարներից մեկն է

Իրանում ընթացող շախմատի մրցաշարի 4-րդ տուրը եւս հաղթական էր Տիգրան Քոթանջյանի համար: Նա պարտության մատնեց իրանցի Ալի Աբեդիին: 4 տուրից հետո Քոթանջյանը հարյուր տոկոսանոց արդյունքով ուկրաինացի Ալեքսանդր Մոիսեենկոյի, ռուսաստանցիներ Եվգենի Գլեյզերովի ու Միխայիլ Ուլիբինի, հոլանդիան ներկայացնող Սերգեյ Տիվյակովի, իրանցի Էհսան Ղաեմի եւ վրացի Դավիթ Բենիձեի հետ գլխավորում է աղյուսակը: 5-րդ տուրում Քոթանջյանը սպիտակներով կխաղա Էհսան Ղաեմի հետ:

Կանայք կմրցեն Մալթայում

Ֆուտբոլի Հայաստանի կանանց ազգային հավաքականը երեկ մեկնել է Մալթա՝ մասնակցելու 2013-ի Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարի նախնական փուլի հանդիպումներին: Մրցաշարը կանցկացվի Տա Կալի քաղաքի «Սենտենարի» մարզադաշտում: Հաջորդ փուլի ուղեգիր կնվաճի միայն հաղթողը:

Մեկնարկային խաղում Վաղարշակ Ասլանյանի սանուհիները վաղը Երեւանի ժամանակով ժամը 17-ին կհանդիպեն Ֆարերների հավաքականի հետ: Երկու օր անց մեր հավաքականը կմրցի Վրացուհիների հետ: Մարտի 8-ին մեր աղջիկների մրցակիցը կլինի Մալթայի հավաքականը:

Բոտի Դեմելը կտեղափոխվի «Ռուսենբորգ»

Ինչպես տեղեկացանք «Միկա» ակումբից, թիմի կոնդիվուարցի հարձակվող Բոտի Դեմելով հետաքրքրվում է Նորվեգիայի բազմակի չեմպիոն «Ռուսենբորգը»: Երկու ակումբների միջեւ արդեն համաձայնություն է ձեռք բերվել Բոտի Դեմելի տեղափոխության հարցում: Վերջինս այսօր կմեկնի Նորվեգիա, որտեղ բուժզննումից հետո երկարաժամկետ պայմանագիր կկնքի «Ռուսենբորգի» հետ:

22-ամյա Բոտի Դեմելը «Միկայում» հայտնվեց 2008-ի մրցաշրջանի ավարտին՝ մասնակցելով մեկ հանդիպման: Հաջորդ մրցաշրջանում նա իրեն լավագույն կողմերով դրսեւորեց՝ աչքի ընկնելով արդյունավետ խաղով: Այդ տարի Դեմելը 14 գնդակով դարձավ թիմի լավագույն ռմբարկու՝ ընդամենը մեկ գոլով զիջելով առաջնության լավագույն ռմբարկուի տիտղոսին արժանացած ուլիսցի Արքուր Քոչարյանին: Անցած տարի Դեմելը վնասվածքի պատճառով մի շարք հանդիպումներ բաց թողեց, ինչն անդրադարձավ նրա արդյունավետության վրա: Դեմելն ընդամենը 7 գոլ խփեց:

«Միկայում» ներկայումս փորձաշրջան է անցնում ֆրանսահայ Մեթյու Էզիկյանը: 19-ամյա ֆուտբոլիստը ֆրանսիական «Ստրասբուրգի» մարզադպրոցի սան է:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Օրվա հետքով

Տերթական «ձեռքեղմումին» ընդառաջ

2-րդ էջից

Նախքան Սոչիի հանդիպումը հասկանալի էր նաեւ ԱՄՆ պետքարտուղարի առաջին տեղակալ Ջեյմս Սթայնբերգի եւ պետքարտուղարի օգնական Ֆիլիպ Գորդոնի հարավկովկասյան շրջայցը: Սա հասկանալի է ոչ միայն բուն ղարաբաղյան գործընթացի առումով, այլեւ ԱՄՆ-Ադրբեջան հարաբերությունների համատեքստում: Այսպես՝ փետրվարի 17-ին, նույն օրը, երբ ԱՄՆ դեսպանի իր հավատարմագրերը Իլհամ Ալիեւին հանձնեց Մեթյու Բրայզան, այնուհետեւ ասուլիս տվեց ադրբեջանցի լրագրողներին, Բաքու ժամանեց Կուբայի արտգործնախարար Բրունո Ռոդրիգես Պարիլյան: Նա հանդիպումներ ունեցավ ԱԳ նախարար Մամեդյարովի եւ այլ պաշտոնատար անձանց հետ: Բաքվի եւ Հավանայի դիվանագիտական հարաբերությունները հաստատվել են դեռեւս 2004-ին: WikiLeaks-ը անգամ փաստում է, որ «ջերմ կապեր կան Կասպրն եւ Ալիեւ ընտանիքների միջեւ», իսկ երբ ԱՄՆ նախկին դեսպանը Բաքվում՝ էն Դերսին, պահանջել է, որ Բաքուն եւս միանալ Կուբայի դեմ միջազգային պատժամիջոցներին, Ադրբեջանը մերժել է: Ակնհայտ է, որ նաեւ այս իրադարձությունից հետո, բավական տեւական ժամանակ՝ մեկ տարուց ավելի, Վաշինգտոնը դեսպան չուներ «տարածաշրջանում իր համար խիստ կարեւոր նշանակություն ունեցող» Բաքվում: Ինչեւէ, նախարար Պարիլյայի Բաքու կատարած այցից ուղիղ մեկ շաբաթ անց արդեն այդ քաղաքում էին ԱՄՆ առաջին փոխպետքարտուղարը եւ պետքարտուղարի օգնականը: Կոնկրետ ղարաբաղյան հարցով, արդեն վերադառնալով Վաշինգտոն, փոխպետքարտուղար Սթայնբերգը հայտարարեց, որ ԱՄՆ-ի համար խիստ կարեւոր է ղարաբաղյան հարցի լուծումը եւ որ «այդ հարցը այժմ արգելափակված է». «Այնուամենայնիվ ԱՄՆ-ը հույս ունի առաջընթաց տեսնել ղարաբաղյան հարցում, ինչը կբխի ինչպես Հայաստանի, այնպես էլ Ադրբեջանի շահերից», եզրակացրել էր Հիլարի Քլինթոնի առաջին տեղակալը:

ԼՂ հիմնահարցում ԱՄՆ-ի «հույսի» հետ կապված հասկանալի են այդ երկրի ռազմական փորձագետների, վերլուծաբանների, անգամ ԱՄՆ ազգային հետախուզության պետի հայտարարությունները: Փետրվարի 20-ին, մինչ ամերիկացի զույգ դիվանագետները կժամանեին տարածաշրջան, ԱՄՆ ազգային հետախուզության տնօրեն Ջեյմս Քլեփփերը ելույթ ունեցավ ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի հետախուզության կոմիտեի լսումների ժամանակ: Քլեփփերը ԼՂ հիմնահարցի վերաբերյալ մասնավորապես նշել է. «Ղարաբաղյան սառեցված հակամարտությունը եւս պայթյունի հավանական օջախ է: Կարծում եմ՝ Ադրբեջանի իշխանությունները բավարարված են հայ-թուրքական հարաբերությունների սառեցման գործընթացով, ավելին՝ նախագահ Ալիեւը ձգտում է Արեւմուտքի ուշադրությունը հրավիրել Ադրբեջանի շահերին՝ ի հաշիվ Հայաստանի: Կարելի է արձանագրել, որ երկու կողմերի ապակառուցողական դիրքորոշումը, նաեւ հրադադարի ռեժիմի հաճախակի դարձած խախտումները մեծացրել են իրավիճակի էսկալացիայի վտանգը»: Ամերիկացի պաշտոնյայի հետ «համաձայն են» նաեւ մի շարք ամերիկացի փորձագետներ, որոնց կարծիքով եւս «Ղարաբաղում պատերազմը խիստ հնարավոր է»: Ճիշտ է՝ նրանցից բոլորը նաեւ շեշտում են, որ «այդ պատերազմը կործանարար կլինի ամբողջ տարածաշրջանի համար»:

Իրենց ամերիկացի «գործընկերների» հետ այնման էլ համաձայն չեն ԵԱՀԿ Մինսկի խմբի մյուս համանախագահող Ռուսաստանը ներկայացնող փոձագետ-վերլուծաբանպաշտոնյաները: «**Ազգը**» փետրվարի 25-ի համարում տեղեկացրեց, որ ռուսական «Յաբլոկո» կուսակցության ներկայացուցիչ, Պետդումայի պատգամավոր Վիկտոր Շեյնիսը պարզապես «բլեֆ» է որակել Ադրբեջանի ռազմատենչ հոխորտանքը, որին սակայն պետք է լրջորեն վերաբերվել, քանի որ՝ «Անհնար է երկար ադրել զենքի փողի տակ»: Գրեթե նույն կարծիքն է հայտնել նաեւ Մինսկի խմբի ռուսաստանցի նախկին համանախագահ Վլադիմիր Կազիմիրովը: Ընդգծելով, որ Ադրբեջանի կողմից պատերազմ սկսելու պատասխանությունը զուտ հռետորաբանություն է, Կազմիրովը նշել է. «Միջազգային հանրությունը՝ ԵԱՀԿ գլխավորությամբ, պետք է որոշումներ ընդունի այս հարցի կարգավորմամբ, քանի որ Բաքվի իշխանությունների՝ պատերազմ վերսկսելու մասին հայտարարությունները մի շարք միջազգային նորմեր են խաթարում, ինչպես նաեւ խաթարում են խաղաղ կարգավորման գործընթացը»: Իր հերթին հայտնի ռուս վերլուծաբան, ՌԴ Գիտությունների ակադեմիայի գիտաշխատող Անդրեյ Արեշեւը նկատել է. «Եկեք լավատես լինենք. կարծում եմ՝ կողմերին ոչ ոք թույլ չի տա երկար պատերազմել, ավելին՝ ռազմական սցենարի անթույլատրելիության մասին այսօր խոսում են բոլոր, ընդ որում՝ բացի Մինսկի խմբի համանախագահողներից, նաեւ Իրանը»: Իրանի մասով բավական հետաքրքրական հայտարարությամբ է հանդես եկել ՌԴ Գիտությունների ակադեմիայի Արեւելագիտության ինստիտուտի մեկ այլ գիտաշխատող Ալեքսանդր Սկակովը: Վերջինս հարցազրույց է տվել ադրբեջանական «Վեստի.ազ»-ին, որտեղ մասնավորապես ասել է. «Իհարկե, Իրանն օժանդակում է Հայաստանին, քանի որ Թեհրանը շահագրգռված է ԼՂ ներկա կարգավիճակի պահպանմամբ եւ չի ցանկանում իր սահմանների անմիջապես հարեւանությամբ տեսնել օսար, թեկուզ խաղաղապահ զորքեր»: Սկակովը նաեւ կարծիք է հայտնել, որ «եթե անգամ Ղարաբաղում վերսկսվի պատերազմը, ապա կտեւի ոչ ավելի, քան 10 օր. կողմերին թույլ չեն տա երկար պատերազմել», նշել է Սկակովը:

Ինչեւէ, մինչ Մինսկի խումբը ներկայացնող Ռուսաստանն ու ԱՄՆ-ը, տարբեր մակարդակներով, սովորաբար իրարամերժ կարծիքներ են բարձրաձայնում ԼՂ հիմնահարցի մասին, Ադրբեջանը, մեղմ ասած, կրկնապատկելով իր ռազմական ծախսերը, նորանոր «զենքի աղբյուրներ է» գտնում: Այսպես, ինչպես հաղորդում է ԱՊԱ-ն՝ «Բաքուն բանակցություններ է վարում չեխական Ceska Zbojovka ընկերության հետ՝ Scorpion EV03 A1 ատրճանակ-գնդացիրներ գնելու: Ինչպես հաղորդել է չեխական ընկերության ներկայացուցիչը, «զինատեսակը համապատասխանում է ՆԱՏՕ-ի չափանիշներին եւ չեխական բանակ է ներմուծվել միայն այս տարի: Զենքը կրակում է 250 մ հեռավորությունից»:

Ինչպես նկատում ենք, մարտի 5-ին Հայաստանի, Ռուսաստանի, Ադրբեջանի նախագահները «քննարկելու շատ բան ունեն», մնում է միայն գուշակել՝ կհեռանա հերթական եռակողմից Իլհամ Ալիեւը դժգո՞հ, թե՞ ոչ: Ի դեպ, Ալիեւը Սոչի կժամանի արդեն իսկ «դժգոհ». ամերիկյան ազդեցիկ The Wall Street Journal-ը օրերս հրապարակեց այն երկրների վարկանիշային ցուցակը, որտեղ «առկա է ապստամբ տրամադրությունների բռնկման հնարավորություն»: Ցուցակում, որտեղ, իմիջիայլոց, Հայաստանը չկա, առաջինը Քենիան է, իսկ «ամենաապայթյունավտանգ տարածքը» եզրափակում է Ադրբեջանը:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

ԿԲ խորհրդի նիստում

Կենտրոնական բանկի խորհուրդը մարտի 1-ի նիստում, որը վարում էր ԿԲ նախագահ Արթուր Ջավադյանը, հաստատեց «ՀՀ տարածքում գործող առեւտրային բանկերի կողմից անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության կարգը», «Ապահովագրական ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձին ներկայացվող չափանիշները» կանոնակարգ 3/11-ը, «Ներդրումային ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացնող անձանց ներկայացվող չափանիշները» կանոնակարգ 4/11-ը, «Անվանատիրոջ հաշիվների վարման նկատմամբ լրացուցիչ պահանջները» կանոնակարգ 5/07-ը:

Խորհուրդը հաստատեց ՀՀ ԿԲ 2012-2013 թթ. հուշադրամների թողարկման ծրագիրը եւ ՀՀ ԿԲ 2010-2011 թթ. հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «Ծաղիկների գեղեցկությունը» հուշադրամների շարքի «Քրքում ադամիի» հուշադրամի դիմերեսի եւ դարձերեսի ուրվագծերը:

Փոփոխություններ եւ լրացումներ կատարվեցին «Հաշվետու թողարկողների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացնող անձանց ներկայացվող չափանիշները» կանոնակարգ 4/09-ում, «Արժեթղթերի պահառության գործունեությունը» կանոնակարգ 33-ում եւ «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների ձեւերը, բովանդակությունը, ներկայացման կարգում ու ժամկետներում»:

Խորհուրդը «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ին «ՌԻԱ ՄԱՆԻ ԹՐԱՆՍՓԵՐ» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն տրամադրեց: Ուժը կորցրած ճանաչվեց «ԱՐՄԱՆԵ ԳԱԶՊԱ» ՍՊԸ-ին տրամադրված արտարժույթի դիլերային առուվաճառքի թիվ 43 լիցենզիան, իսկ «Ալբերտ Պապոյան» փոխանակման կետի արտարժույթի առուվաճառքի թիվ 236 լիցենզիան վերաձեւակերպվեց:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության 7.03.2011թ. ժամը 10:00-ին, 12:00-ին 14:00-ին հայտարարած աճուրդները տեղի կունենան 12.03.2011թ. հայտարարված ժամին:

«Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ

Ցավակցություն

«Ազգի» խմբագրակազմը խորապես ցավակցում է Գյումրիի իր թղթակից Գեղամ Մկրտչյանին սիրելի եղբորորդու՝

Մենիկ Մկրտչյանի

ողբերգական մահվան կապակցությամբ:

Հաստատված է
Տնօրեն՝
Աուդիտ՝

«Էջ էֆ Զի Աուդիտ» ՍՊԸ-ի կողմից
Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
22.02.2011 թ.

Ձեւ N1

Հաշվապահական հաշվեկշիռ
առ 01.01.2011 թ.

Կազմակերպության անվանումը «Մոնգար» ՍՊԸ
Փաստացի գործունեության հիմնական երկու տեսակները Դրամ. շահ. խաղ. ապ. կազմ.
Պետական ռեգիստրում գրանցման համարը 3811 00 1845
Հարկ վճարողի հաշվառման համարը 04721918
Չափի միավորը հազ. դրամ
Գտնվելու վայրը՝ ք. Վաղարշապատ, Չարենցի 21/20

ԱԿՏԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
I. Ոչ ընթացիկ ակտիվներ			
Ոչ նյութական ակտիվներ	030		749
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	080		749
II. Ընթացիկ ակտիվներ			
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	170	300	
Այլ դեբիտորական պարտքեր	180	129	
Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ	200	6265	3917
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	220	6694	3917
Հաշվեկշիռ	230	6694	4666

ՊԱՍՏԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
III. Սեփական կապիտալ			
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար	240	50	50
Կուտակված շահույթ	270	6644	4470
Ընդամենը սեփական կապիտալ	300	6694	4520
V. Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	420		146
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	490		146
Հաշվեկշիռ	500	6694	4666

Ձեւ N2

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
առ 01.01.2011 թ.

Ցուցանիշի անվանումը	տող	Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական)	Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական)
1	2	3	4
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	010	53681	50476
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների ծառայությունների ինքնարժեք	020	(5000)	(4251)
Համախառն շահույթ (վնաս)	030	48681	46225
Իրացման ծախսեր	040	(9174)	(10496)
Վարչական ծախսեր	050	(1260)	(1259)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	060	38247	34470
Գործառնական այլ ծախսեր, այդ թվում՝	080	(26851)	(30000)
	081	(26851)	(30000)
Գործառնական շահույթ (վնաս)	090	11396	4470
Սովորական գործառնությունից շահույթ (վնաս)	140	11396	4470
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	160	11396	4470
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով նվազեցումից հետո	180	11396	4470

Ղեկավար՝ **ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**
Կ. Տ.

Հաստատված է
Տնօրեն՝
Աուդիտ՝

«Էյ էֆ Զի Աուդիտ» ՍՊԸ-ի կողմից
Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
22.02.2011 թ.

Ձեւ N1

Հաշվապահական հաշվեկշիռ
առ 01.01.2011 թ.

Կազմակերպության անվանումը՝ «Մեգա Գալ Գրուպ» ՍՊԸ
Փաստացի գործունեության հիմնական երկու տեսակները Դրամ. շահ. խաղ. ապ. կազմ.
Պետական ռեգիստրում գրանցման համարը 27111 00 3492
Հարկ վճարողի հաշվառման համարը 012 42 743
Չափի միավորը՝ հազ. դրամ
Գտնվելու վայրը՝ Զվարթնոց օդանավակայան հանրակացարան

ԱԿՏԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
I. Ոչ ընթացիկ ակտիվներ			
Ոչ նյութական ակտիվներ	030	4584	4584
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	080	4584	4584
II. Ընթացիկ ակտիվներ			
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	170	40	
Այլ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	180	160	
Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ	200	1	279
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	220	201	279
Հաշվեկշիռ	230	4785	4863

ՊԱՍՏԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
III. Սեփական կապիտալ			
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար	240	50	50
Կուտակված շահույթ	270	(14684)	2978
Ընդամենը սեփական կապիտալ	300	(14634)	3028
IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ	310	17422	
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	360	17422	
V. Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	410	1755	1760
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով	420	242	75
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	490	1997	1835
Հաշվեկշիռ	500	4785	4863

Ձեւ N2

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
առ 01.01.2011 թ.

Ցուցանիշի անվանումը	տող	Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական)	Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական)
1	2	3	4
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների ծառայությունների իրացումից հասույթ	010	16122	67776
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք	020	(10000)	(5000)
Համախառն շահույթ (վնաս)	030	6122	62776
Իրացման ծախսեր	040	(1717)	(8999)
Վարչական ծախսեր	050	(3724)	(1169)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	060	681	52608
Գործառնական այլ ծախսեր, այդ թվում	080	(10291)	(30000)
	081	(10291)	(30000)
Գործառնական շահույթ (վնաս)	090	(9610)	22608
Սովորական գործառնությունից շահույթ (վնաս)	140	(9610)	22608
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	160	(9610)	22608
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով նվազեցումից հետո	180	(9610)	22608

Ղեկավար՝ **Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**
Կ. Տ.

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 1.3.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: